МЕЖДУНАРОДНЫЙ ДВУЯЗЫЧНЫЙ РУССКО-АРМЯНСКИЙ ЕЖЕМЕСЯЧНЫЙ ЖУРНАЛ

Գործարար ГОРЦАРАР

АПРЕЛЬ-ИЮНЬ № 4-6 (156-158) 2012 г.



Աշխատել ու աշխատելու եմ իմ ուժերի սահմաններում Э2

Աշխատել ու աշխատելու եմ իմ ուժերի սահմաններում

Կան առաջինավարք անհատականություններ, որոնք իրենց գիտակցական կյանքը, գործունեությունը ամբողջապես նվիրաբերում են իրենց ծնած ու սնուցած ժողովրդին՝ դառնալով նրա անցնելիք ճանապարհի լուսաշող ջահերից մեկը: Սրանք մեծարանքի արտահայտություններ չեն, այլ հայեցի կերպարի իրական բնութագրում, որոնք իրական օրինակ են՝ իրենց պայծառ ու վեհ մարդկային հատկանիշներով, ինչը և, անշուշտ, մեկնաբանության կարիք ունի: Մեկնաբանություն խոսուն վաստակի, որը գնահատանքի է արժանի, իսկ այդ վաստակը նրանց աշխատանքի խտացումն է, ապրածի, նվիրումի շնորհիվ ձեռքբերումների ամբողջությունը:

Մեր ամսագրի այսօրվա հյուրն է հարգարժան այդ այրերից մեկը՝ ՀՀ նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար, ԱԺ պատգամավորության թեկնածու, «Տաշիր» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Կարեն Կարապետյանը:



– Պարոն Կարապետյան, ի՞նչը Ձեզ ստիպեց որոշակի ընդմիջումից հետո կրկին վերադառնալ քաղաքականություն:

– Ես երբեք քաղաքականությունից դուրս չեմ եկել, որպեսզի վերադառնամ: Քաղաքական պաշտոնից հրաժարումը դեռևս չի նշանակում դուրս գալ քաղաքականությունից: ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի պաշտոնը քաղաքական պաշտոն է, և ես ընդամենն իմ ցանկությամբ ազատվել եմ այդ պաշտոնից:

– Ձեզ համար քաղաքականության մեջ որո՞նք են հիմնական առաջնահերթությունները:

– Առաջին և գլխավոր առաջնահերթությունը ժողովրդավարական հասարակության լիարժեք հաստատումն է: Հավաքական այլընտրանքի առկայությունը ազատ կամարտահայտման և լիարժեք ընտրության հնարավորություն է ընձեռում: Հաջորդ կարևորագույն խնդիրը քաղաքակիրթ հարաբերությունների հաստատումն է: Ցավոք, մեր քաղաքական դաշտում հաճախ հարաբերությունները դուրս են եկել քաղաքական և քաղաքագիտական տրամաբանությունից: Դրա արդյունքում է, որ քաղաքական պայքարը ոչ քիչ դեպքերում ոչ թե գաղափարական հարթության մեջ է եղել, այլ պայմանավորված բացառապես հակադրվելու մոտեցմամբ: Այսինքն, հաճախ գործել է ընդդեմի անընդունելի հոգեբանությունը: Այնինչ գոնե անցած 20 տարիները ցույց են տվել, որ հանդուրժողականության ու քաղաքակիրթ երկխոսությանն ուղղակի այլընտրանք չկա: Մենք կարևորագույն խնդիր ունենք գլոբալ առումով քաղաքական դաշտի և հասարակական հոգեբանության առողջացման առումով՝ հատկապես պատասխանատվության զգացման խորացման, ինչպես նաև գոնե ազգային և համապետական նշանակության հարցերում միասնականության և իրողությունների օբյեկտիվ գնահատման տեսակետից:

– Ըստ իս՝ այսօր հայ հասարակությունը երկխոսության պակաս ունի: Կարո՞ղ է արդյոք Ձեր շնորհիվ մեր ամսագիրը դառնալ քաղաքական գործչի և ժողովրդի կապի հաստատման հնարավոր միջոցներից մեկը:

– Ես արդեն նշեցի, որ քաղաքակիրթ երկխոսությանն ուղղակի այլընտրանք չկա: Դա ոչ միայն քաղաքական, այլև հասարակական հարաբերությունների հիմնարար պայմաններից մեկն է: Գաղտնիք չէ, որ պատմության բոլոր այն ժամանակահատվածներում, երբ մեր երկիրը թուլացել ու տարածքային կորուստներ է ունեցել, գրեթե մշտապես պատճառը եղել են ներքին հակասությունները, եսակենտրոն քաղաքականությունն ու նեղ շահադիտական մոտեցումների գերակայությունը: Այնինչ, ցանկացած ժամանակ գերակա պիտի լինեն ազգային ու պետական շահերը: Ինչ վերաբերում է ձեր ամսագրին, ապա, կարծում եմ, հասարակական երկխոսության ճանապարհին անգնահատելի դեր ունեն բոլոր լրատվամիջոցները, այդ թվում՝ նաև դուք: Միևնույն ժամանակ, քաղաքական գործչի ու հասարակության կապը առավելապես պետք է անմիջական լինի և հնարավորինս քիչ միջնորդավորված:

– Մեր ամսագրի կողմից մեկ տարվա ընթացքում անցկացրած սոցհարցումների արդյունքում հստակեցվել են ՀՀ-ում առավել առաջնային սոցիալական կարևորության հարցերը, որոնցից են արտագաղթի կանխումը և այդ ուղղությամբ կոնկրետ քայլերը: Համաձա՞յն եք նման գնահատականի հետ:

– Կարծում եմ՝ երկրում առկա խնդիրները և արտագաղթը ուղղակիորեն կապված են միմյանց հետ, ուստի հնարավոր չէ կանխել արտագաղթը, եթե համակարգված կերպով չեն լուծվում եղած սոցիալ-տնտեսական խնդիրները: Մենք փոքր երկիր ենք, որը գտնվում է բարդ աշխարհաքաղաքական պայմաններում և արտաքին լուրջ մարտահրավերների առջև: Ուստի այս պայմաններում արտագաղթի միտումների խորացումը վտանգավոր է հենց ազգային անվտանգության տեսակետից: Ավելին, շատ ցավալի է, որ արտագաղթում է առավելապես հասարակության աշխատունակ և առավել ակտիվ զանգվածը: Այդ ներուժը, որպես կանոն, Հայրենիքից դուրս զգալի հաջողությունների է հասնում: Ուրեմն մենք պարտավոր ենք մարդկանց համար ապահովել բնականոն պայմաններ՝ մի կողմից որակյալ կրթություն ստանալու, մյուս կողմից աշխատանքային այլընտրանք ու համարժեք աշխատավարձ ապահովելու համար:

– Ձեր պատկերացմամբ՝ ինչպիսի՞ն պետք է լինեն Հայաստան-Սփյուռք հարաբերությունները:

– Հայկական Սփյուռքն առաջին հերթին ձևավորվել է պատմականորեն՝ ողբերգական Եղեռնի հետևանքով: Սակայն մոտ մեկ միլիոն մեր հայրենակիցներ համալրել են Սփյուռքը՝ անցած քսան տարիների ընթացքում: Ուրեմն՝ մի կողմից անհրաժեշտ է կանխել արտագաղթի հետագա զարգացման միտումները, մյուս կողմից համապատասխան պայմաններ ստեղծել՝ Հայրենիք վերադառնալու համար, և վերջապես՝ պետք է հասկանանք, թե ինչպես է հարկավոր արդյունավետորեն օգտագործել դրսում ձևավորված ներուժը: Պետությունը ուղղակի պարտավոր է համակարգել և ճիշտ նպատակաուղղել այն՝ ելնելով երկրի շահերից: Խոսքը վերաբերվում է թե Հայրենիքում արդյունավետ ու մրցակցային ներդրումային դաշտ ապահովելուն, թե արտաքին քաղաքականության գերակայություններին, թե երկրի համար կարևորագույն նշանակություն ունեցող այլ ծրագրերին: Միևնույն ժամանակ, Հայաստանից դուրս գտնվող մեր հայրենակիցները, կարծում եմ, շատ լավ գիտակցում են, որ պետությունը բարձր արժեք է: Եվ ընդհանրապես, անհրաժեշտ է ոչ թե տարանջատել Հայաստանն ու Սփյուռքը, այլ դրանք դիտարկել բացառապես մեկ միասնականության մեջ:

– Առջևում խորհրդարանական ընտրություններն են: Ի՞նչ խոստումներով եք ներկայանում ձեր ընտրողներին:

– Ես եղել եմ ՀՀ ԱԺ բոլոր չորս գումարումների պատգամավոր, այդ թվում՝ երեք անգամ ընտրվել եմ մեծամասնական ընտրակարգով: Եվ որևէ ընտրության ժամանակ երբեք խոստումներ չեմ տվել: Ընդհանրապես, իմ և Կարապետյանների ընտանիքի գործունեությունը երբեք կապված չի եղել ընտրությունների կամ նախընտրական գործընթացների հետ: Միակ բանը, որ խոստացել և խոստանում եմ նաև հիմա, այն է, որ աշխատել ու աշխատելու եմ իմ ուժերի սահմաններում:

Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Լավը լինելը այս կյանքում կարեւոր է: Նույնքան կարեւոր է եւ լավը նկատելը: Ավելին՝ գնահատելը:

Աշխատել հոգու ուժով՝ դա իմ մասնակցությունն է կյանքին

Լինում է չէ՞, հավաքվում են մարդիկ, խոսում քաղաքի անց ու դարձից, այս մարդուց, մյուսի արածից... Այս անգամ «թեման» Հերմինե անունով բժշկուհու մասին էր: Զրուցակիցս՝ Սարգիսը, ոգևորված պատմում էր բժշկուհու մարդկային վերաբերմունքի, անշահախնդիր օգնության մասին: Խոսակցությունը «էպիկական» շունչ ուներ, որից «կկռահես» բժշկուհու մասնագիտությունը՝ մանկաբույժ:

Զրույցից լրագրողիս մոտ ցանկություն առաջացավ մոտիկից ծանոթանալու, զրուցելու «Արաբկիր» առողջության և բժշկա-սոցիալական վերականգնողական կենտրոնի Վանաձորի մասնաճյուղի բժշկուհի Հերմինե Քոչարյանի հետ: Զարմացավ, որ գիտեմ պատմությունը, փոքր ինչ կաշկանդվեց և համեստաբար՝ «Անում ենք այն, ինչ պարտավոր է և կանի յուրաքանչյուր բժիշկ»:


Բժշկուհի Հերմինե Քոչարյանն ու հոգեբան Արծվիկ Հարությունյանը:

Երբևիցե բժշկի օգնությանը դիմած ամեն մեկս գիտենք, թե ինչպիսի մոգական ազդեցություն կարող է ունենալ նրա կողմից ասված գեթ մեկ մխիթարական խոսքը, դրսևորած վերաբերմունքը, թե ինչպես հիվանդի վրա բացասական ազդեցություն է ունենում բժշկի խիստ ու սառնաշունչ հայացքը, որը չգիտի և չի կարող իմանալ ներշնչման ուժը:

Ասում են՝ երեխաներին ծերբազատելու ինչ-ինչ խնդիրներից, ջերմություն, սեր ու հավատ նրանց հասցնելու հիմնական մայրուղին անցնում է մանկաբույժի սրտով:

Բժշկուհի Հերմինե Քոչարյանը քայլում է այդ մայրուղով, այդ սիրով ծնողների, երեխաների սրտերում բացում լիարժեք ապրելու հավատն ու հույսը:

Եվ ինչպես ինքն է իր աշխատանքի անհրաժեշտությունը մեկնաբանում.

– *Աշխատում եմ հոգու ուժով՝ այն համարելով իմ բաժին մասնակցությունը կյանքին:*

Նրա մեջ հաճելիորեն զուգորդված են լավ մարդն ու հմուտ մասնագետը:

Մարդ, ով անտարբեր չէ իր շրջապատին, միշտ պատրաստ ծառայելու իր ժողովրդին, նրան տալով լավն ու բարին, որով իսկ ինքն էլ է երջանկանում, ասել է թե՝ լինել երջանիկ ուրիշի երջանկությամբ. ահա յուրաքանչյուրի իսկական երջանկությունը, ով իրեն նվիրաբերում է բժշկությանը:

Բնությունը զարդարող մարդ արարածի առաքելություն, ում մասին պետք է խոսել ու լսելի դարձնել ընթերցողին:

Փորձեմ բժշկուհուն ներկայացնել իմաստալի կենսագրության ակունքներից: Ծնունդով Վահագնի գյուղից է, որտեղ էլ ստացել է միջնակարգ կրթություն, ընդունակությունները զարգացրել է՝ ուսանելով բժշկական բուհում՝ սովորելով Երևանի պետական բժշկական ինստիտուտի մանկաբուժական ֆակուլտետում, ավարտել այն՝ ստանալով մանկաբույժի որակավորում:

Ինչո՞ւ բժիշկ-մանկաբույժ: Երբվանի՞ց, ո՞ր տարիքում առաջին անգամ գիտակցության մեջ ծնվեց, հասունացավ մասնագիտության ընտրության խնդիրը, որը հետո դարձավ ճակատագիր, չի հիշում:

– *Երևի թե մարդկանց օգտակար լինելու, նրանց առողջությունը պահպանելու գործին նվիրվելու ցանկությունը:*

Հիպոկրատին երդում տալով, տված երդմանը հավատարիմ՝ լծվեց գործի՝ նվիրվելով երեխաների առողջության պահպանման և վերականգնման գործին (բժիշկի կոչումը բնագավառի յուրաքանչյուրի համար թանկ խորհուրդ է), աշխատանքի մեջ դնելով այն ամբողջ լավը, որ կա իր մեջ. բժշկի կայուն ու խոր գիտելիքներ, հոգատար վերաբերմունք շրջապատի և հիվանդների նկատմամբ:

Շուրջ 13 տարի աշխատել է Վանաձորի թիվ 3 համաբուժարանում, որպես մանկաբույժ, օրդինատուրայում գիտելիքները խորացնելուց հետո գործունեությունը շարունակում է «Արաբկիր» առողջության և բժշկա-սոցիալական վերականգնողական կենտրոնում՝ նվիրվելով այդքան անհրաժեշտ և սրտամոտ գործին:

– *Մենք աշխատում ենք օգնել ֆիզիկական, մտավոր ինչ-ինչ խնդիրներ ունեցող երեխաներին,* - ասում է Հերմինե Քոչարյանը: - *Դրանով իսկ արդեն վերջիններս, նրանց ծնողները իրենց սփոփված են զգում, հավատով լցվում, որ այդ խնդիրները ետևում կմնան:*

Եթե բժշկի հետ խոսելուց հետո հիվանդի վիճակը չի թեթևանում, ապա նա բժիշկ չէ, սա իմ խոսքերը չեն, ռուս ճանաչված նյարդաբան Բեխտերևի խոսքերն են:

Օգտակար զբաղվածությունը երևի թե նրա էությունն է, առանց որի ապրած օրը աղքատիկ կլիներ:

Իրեն առողջ համարող մարդն անգամ խնամքի և հոգատար վերաբերմունքի բնատուր պահանջ ունի: Իսկ առողջական որոշակի խնդիրներ ունեցող հիվանդի համար բուժաշխատողի հոգատար ու բարյացակամ վերաբերմունքն արդեն կենսական անհրաժեշտություն է ու հրաշագործ դեղամիջոց:

Իրենց գործում արհեստավարժներ՝ հոգեբան Արծվիկ Հարությունյանը, մանկավարժ Լիանա Ղազարյանը, մյուսները անում են հնարավորին ամեն ինչ, անշահախնդիր աշխատանքով հավատ ներշնչում իրենց օգնությանը դիմած մարդկանց, վստահեցնում


Կենտրոնի բուժական անձնակազմը:

նրանց, որ կստանան լիարժեք բժշկական, հոգեբանական ու մանկավարժական ծառայություն:

Ասելիքս թերի կլինի, եթե չընդգծվի առաքինի հայ կնոջ այն տեսակի մասին, ինչպիսին է Հերմինե Քոչարյանը: Նա առաջին հերթին երջանիկ է իր ընտանիքի գրկում՝ սիրագորով կին, երբ խոսքը վերաբերվում է ամուսնուն, ամեն ինչից վեր նրա համար մայրությունն է, երբ խոսքը վերաբերվում է զավակներին՝ հպարտ յուրաքանչյուրի հաջողություններով:

Բայց նույնքան, գուցեև ավելի նրան ձգում է իր աշխատատեղը, քանի որ պատասխանատվության զգացում կա:

Պատճառը դա է, որ դիմում են բժիշկ-վերականգնողին հավատով, որ նա հուսախաբ չի անի, կանի առավելագույնը, որ երջանկությունը այցելուից երես չթեքի:

Տա Աստված երջանիկ ու ժպտացող այցելուների թիվը ի շնորհիվ բժշկուհի Հերմինե Քոչարյանի բարեխիղճ աշխատանքի էլ ավելի ավելանա: Իսկ այդ երջանկությունն ու ժպիտն այսօր, և առհասարակ մարդուն ինչքա՛ն շատ է հարկավոր...

Լեւոն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Պետք է հիշենք


Սեյրան Տիփանյան



— **Սովորական կենսագրությամբ, բայց պրպտող, ստեղծող մտքի տեր մի մարդ, որ Ալավերդի քաղաքի փարեգրության մեջ մնայուն հետք է թողել իր բազմաշնորհ լուսանկարներով: Ով փորձել է հայրենի բնությունն ու իրեն շրջապատող մարդկանց տեսնել իր հոգու աչքերով, այլ ոչ թե սոսկ ֆոտոխցիկի ապակիների միջից, ով կենցաղային, առօրյա լուսանկարչական գործը, կարելի է ասել կարողացել է հասցնել գեղարվեստական գործի:**

Նրա լուսանկարներում քարերն են խոսում *կամ* Սեյրան Տիփանյանի քարերի սիմֆոնիան

Քայլելով իրեն ծանոթ ծմակներով, նրա աչքը հայրենի բնաշխարհի յուրաքանչյուր անկյունից մի «պատառիկ» էր պոկում իր համար՝ թեկուզ լուսանկարի տեսքով: Սեյրան Տիտանյանը կարողանում էր իրեն շրջապատող գեղեցիկը «տեղավորել» փոքրիկ կադրերի շրջանակներում, «լուսամուտներ» բացելով դեպի հազար ու մի հրաշքներով հարուստ հայրենի բնաշխարհը: Լոռին նրա զարմանահրաշ աշխարհն էր: Եվ նա ձգտում էր ստեղծել սեփականը, իր լուսանկարների «հեքիաթը»: Ինքնուրույնությունը լուսանկարիչի անհատականությունն էր, նրա դեմքը, չկա ստեղծագործող առանց անհատականության: Սեյրան Տիտանյան անհատականությունը տարբերվում էր կյանքի հանդեպ ունեցած վերաբերմունքով ու տեսնելու կարողությամբ, որ պահի արձանագրումը դարձնում էր գեղարվեստական փաստ, ստեղծում էր մքնոլորտ ու արտահայտվում, ապրում վիճակով:



Ծնվել է 1936 թ. Թումանյանի շրջանի Օձուն գյուղում: Միջնակարգն ավարտելուց հետո ուսումը շարունակել Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում, սակայն չի ավարտել անապահով կենսապայմանների պատճառով (Հայ անվանի գեղանկարիչներ Ռուդոլֆ Խաչատրյանը, Մինաս Ավետիսյանը եղել են Սեյրան Տիտանյանի ուսանողական ընկերները, որոնք տեսնելով նրա «Բնությունը քանդակագործ» լուսանկարների շարքը, ասել են. «Տաղանդավոր գեղանկարիչ կդառնար, ափսոս՝ ուսումը թերի թողեց»: Ու վրձնին փոխարինեց լուսանկարչական ապարատը:

Ընդամենը հինգ ու կես տասնամյակ ապրած լուսանկարիչը ստեղծագործական աշխարհի իր տեսակով հայտնի էր սոսկ իր քաղաքում, մտերիմների, ծանոթ բարեկամների շրջանում, քանզի հասարակությանը ներկայացել էր իր շնորհաշատ լուսանկարներով մի քանի տեղական նշանակության ցուցահանդեսներում: Ուստի այս փոքրիկ «ցուցահանդեսը» առիթ է մոտիկից ծանոթանալու լուսանկարչի աշխատանքներին, ինչու չէ նաև ոգեշնչվելու:



Թվում է, թե Լոռվա բնաշխարհում ոչ մի գեղեցկություն չի վրիպել Սեյրան Տիտանյանի օբյեկտիվից. ահա բնության «քանդակած» «Արքիմեդը», «Եզովպոսը», «Մեսրոպ Մաշտոցը», «Ավետիք Իսահակյանը», «Վարդանի զինվորը»...


Այո, դրանք Սեյրան Տիտանյանի Լոռվա բնաշխարհը հավիտենությանը հանձնած լուսանկարների քարե սիմֆոնիան է, ում մասին տարիներ անց իր համակուրսեցի, Հայաստանի Հանրապետության ժողովրդական նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանը պիտի ասեր. «Թերլեմեզյանի անվան ուսումնարանում սովորելիս ամբողջ կուրսով մտածում էինք, կարո՞ղ ենք, արդյոք, մենք էլ նկարել Սեյրանի նման»:

Այդ մի քանի ցուցահանդեսները եկան հաստատելու, որ գեղագիտական-մտածողական հայացքի և ստեղծագործական մոտեցումի պարագայում լուսանկարը նույնպես կարող է վերածվել արվեստի գործի:



Գեղագիտական ընկալումն առհասարակ արտիստիկ շնորհ է, արվեստը դրա արտահայտությունն է, նաև լուսանկարչությունը, որի հանդեպ հատկապես վերջին տարիներին փոխվեցին մեր պատկերացումները:

Լուսանկարչությունը, որ առաջին հայացքից մարդկանց մոտ թողնում է պարզ մի զբաղմունքի տպավորություն, իրականում դրանով լուրջ զբաղվող արհեստավարժից պահանջում է բավականին նուրբ և սուր հայացք այնտեղ, ինչի կողքով սովորական մարդն անցնում է առանց նկատելու






այն, անտարբերությամբ: Իսկ Սեյրան Տիտանյանի աչքից չի վրիպել և ոչ մի «մանրունք», այդ է պատճառը, որ նրա լուսանկարները տրամադրություն են ստեղծում, կենդանի միջավայր: Թեև լուսանկարիչը սիրահարված էր իր բնաշխարհին, նրանում տեղ գտած քարե երևույթներին, լուսանկարները ուշադիր նայողը չի կարող չնկատել, որ դրանցում դրսևորված է և ներքնաշխարհ, որը դիտողին հաղորդակից է դարձնում իր ապրումներին: Քանզի բնության հետ լուսանկարչի ներդաշնակությունը ուներ ձեռք բերված դրսևորումներ, նրա սերը բնության հետ իր երանգն ուներ, հայրենի քար ու քարափի հետ կապը շատ մտերմիկ էր:

Յուրաքանչյուր մարդ մի աշխարհ է իր աշխարհընկալումով, իր ուրույն զգացողություններով: Իսկ եթե այդ մարդը ունի հայրենի եզերքում, ծննդավայրում ապրած ու չապրած նվիրական պահեր, օժտված է, և ունի նուրբ ու թափանցող զգացողություններ, ինչ խոսք, նրա ներքին աշխարհը մեզ է ներկայանում շատ ավելի հետաքրքրական կողմերով:

ԼԵՒՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ալավերդի-Վանաձոր-Կալուգա



Խմբագրության կողմից

Ժողովուրդ ենք, որ սիրում ենք մեր չունեցածը, չենք փայփայում այն, ինչ ունենք:

Համոզված ենք կգտնվեն մարդիկ, որ այսպես կմտածեն: Ուրեմն արժե գուցե հիմա կազմել Սեյրան Տիփանյանի լուսանկարների ալբոմ-ուղեցույցը՝ «Բնությունը հրաշագործ», կամ թե «Լոռվա կախարդական աշխարհի թարգմանիչը» խորագրով, ուղեցույց, որ կհետաքրքրի եւ հազարավոր զբոսաշրջիկների, եւ միաժամանակ կդիպչի որպես երախտիքի տուրք ի հիշատակ վաստակաշատ մարդու:

Արժե խորհել:

Ջանազան-զարմանազան

Տպագիր խոսքը թվային տեխնոլոգիաների մեր ժամանակներում առանձնահատուկ իմաստ է ձեռք բերում: Սա առաջին հերթին վերաբերում է պատմականորեն նշանակալի և հիրավի հազվագյուտ գրքերին: Բացառիկ այս հրատարակությունները ձեռք բերելու համար որոշ մարդիկ պատրաստ են անհավատալի, խելքից-մտքից դուրս գումարներ ծախսել: Նման հազվագյուտ սկզբնատիպ գրքերից՝ ինկունաբուլաներից են «Լեսթերի կոդեքսը»՝ Լեոնարդո դա Վինչիի էսքիզներն ու գիտական աշխատությունները պարունակող գիրքը, Շեքսպիրի պիեսների առաջին հրատարակությունը, Մերկատորի «Եվրոպայի ատլասը», Գուտենբերգի Աստվածաշունչը...

Ավանդաբար համարվում է, որ Եվրոպայում տպագրության սկիզբը դրվել է Աստվածաշնչի հրատարակությամբ, թեպետ մինչ Աստվածաշնչին ձեռնամուխ լինելը Գուտենբերգը տպագրել էր օրացույցներ, լատիներեն քերականության դասագրքեր, ինդուլգենցիաներ: Սա, կարելի է ասել, նախապատրաստական շրջան էր մինչ իր մեծածավալ աշխատանքին ձեռնամուխ լինելը:

Ստեղծման պատմությունը

1448 թ. Յոհան Գուտենբերգը գրատպություն հիմնելու համար 150 գուլդեն է պարտք վերցնում: 1450 թ. գործի համար պահանջվում է ևս 800 գուլդեն, և Գուտենբերգը դիմում է վաճառական Յոհան Ֆուստին: 1455 թ. արդեն Գուտենբերգի պարտքը հասել էր 2000 գուլդենի, որը նա չի կարողանում վերադարձնել, և տպագրատունն ու Աստվածաշնչի բոլոր տպագրված օրինակներն անցնում են Ֆուստին ու Շյոֆերին՝ Գուտենբերգի աշակերտին: Դատարանը տպագրիչին թողնում է միայն տառերի սկզբնական լրակազմը:

Աստվածաշնչի տպագրության համար պահանջվում է շուրջ 1 տարի: (Համեմատելու համար նշենք, որ վանքերում գրիչները 1 տարում այսպիսի ծավալի ու որակի միայն 1 գիրք էին արտագրում): Համարվում է, որ Գուտենբերգի Աստվածաշնչի համար նախատիպ է ծառայել «Մայնցի մեծ Աստվածաշունչը»՝ 1452 և 1453 թթ. ստեղծված 1300-էջանոց պատկերազարդ ձեռագիր մատյանը: Գուտենբերգը աշխատել էր ստեղծել ձեռագիր մատյանի առավել ճշգրիտ պատճենը. տպագիր է արտագրում միայն հիմնական տեքստը, անվանատառերը և սյունակավորումները ձեռքով են գրված, առանձին նմուշօրինակներ գունազարդված են, տպատառերում միևնույն նշանների նախշերը տարակերպ են: Այսպիսի նմանակումը հատկանշական է մինչև 1500-ական թվականները հրատարակված սկզբնատիպ գրքերի համար: Աստվածաշունչը երկհատորանոց է՝ բաղկացած 648 և 638 էջից և մոտ 3400000 տպագիր նշանից: Յուրաքանչյուր էջը բաղկացած է 42 տողից, այդ պատճառով Գուտենբերգի Աստվածաշունչը հայտնի է նաև «42-տողանոց Աստվածաշունչ» անունով:

Ժամանակակից հաշվարկով՝ Գուտենբերգը հրատարակել է Աստվածաշնչի շուրջ 180 օրինակ: Մեծ մասը տպագրված է իտալական բարձրորակ թղթի վրա: Շուրջ 45 օրինակ տպագրված է մագաղաթաթղթի վրա: Այս օրինակները, բնականաբար, ավելի թանկ արժեին:

Գրքի հետագա ճակատագիրը

Տպագիր Աստվածաշնչի օրինակները անմիջապես վաճառվեցին: Հայտնի է, որ որոշ օրինակներ վաճառվեցին 30 ֆլորինով: Թեպետ դա զգալի էժան էր ձեռագիր գրքից, այնուամենայնիվ սովորական եկամուտի տեր մարկանց մեծ մասն ի վիճակի չէր ձեռք բերելու Գիրքը: Ենթադրվում է, որ տպագիր Աստվածաշնչի մեծ մասը ձեռք են բերել վանքերը, համալսարանները և շատ ունևոր մարդիկ: Այսօր հայտնի է միայն մեկ օրինակ, որը 15-րդ դարում պատկանել է մասնավոր անձի. 1763 թ. կարդինալ Մազարինիի թղթերում հայտնաբերվեց Գուտենբերգի հրատարակած Աստվածաշունչը:

2009 թ. դրությամբ, աշխարհի տարբեր հավաքածուներում պահպանվում էր Աստվածաշնչի սկզբնատիպ տպագրության 47 օրինակ, որոնցից միայն 21-ն էր լրիվ: 12 օրինակ պահպանվում է Գերմանիայում, 11 օրինակ՝ ԱՄՆ-ում, 8-ը՝ Մեծ Բրիտանիայում: Ցարական Ռուսաստանում թղթի վրա տպագրված Աստվածաշնչի 1 օրինակ կար, սակայն 1931 թ. սովետական կառավարությունը վաճառեց այն լոնդոնցի աճուրդավարներին: 1945 թ. Լայպցիգից որպես ռազմավար ԽՍՀՄ տեղափոխվեց գուտենբերգյան 2 Աստվածաշունչ: Դրանց գտնվելու վայրի մասին պաշտոնապես հայտնի դարձավ միայն 1993-ին: Լայպցիգի համալսարանի 2-հատորանոց թղթե այս Աստվածաշունչերն այժմ ի պահ են տրված Մոսկվայի պետական համալսարանի գրադարանին:

18-րդ դարից սկսած Գուտենբերգի Աստվածաշնչի ոչ մի օրինակ մասնավոր վաճառքում չի եղել:

Այսօր Մայնցի տպագիր Աստվածաշնչի մեկ օրինակը գնահատվում է 25-35 մլն դոլար, իսկ 1 էջի գինը աճուրդում հասնում է մինչ 80 հազար դոլարի: 1987 թ. «Քրիստիս» աճուրդում թղթե Աստվածաշնչի ոչ լրիվ 1 հատորը (324 էջ) վաճառվեց 4, 9 մլն դոլարով: Այժմ այն գտնվում է Տոկիոյի Քեյո համալսարանի հավաքածուում:

Սիրավան ՍԵՎՈՒՆԻ

ԴԵՊՔԵՐ ԵՎ ՄՏՔԵՐ

ԽԵՂԴԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Գայձ Գաբեղը կոմիկ դերասան էր և թատրոնում հայտնի էր որպես բաքոսի թունդ սիրահար: Այնպես պատահեց, որ Օթելլոյի հռչակավոր դերակատար Վահրամ Փափազյանը այդ երեկո բացակայում էր քաղաքից, իսկ տոմսերը վաճառվել էին և ներկայացումը ձախողել չէր կարելի: Թատրոնի ղեկավարությունը Օթելլոյի դերակատարումը հանձնարարեց Գայձ Գաբեղին: Ներկայացման ընդմիջմանը Գայձ Գաբեղը գրպանից հանեց տափակաշիշը, գավաթը լցրեց ինքնաքաշ օղի և դարձավ Դեզդեմոնային.

- Դեզդեմոնա ջան, քեզ խեղդելուցս առաջ թույլ տուր այս գավաթի պարունակությունը խմել քո առողջության կենացը:

ԺԱՄԿԵՏԸ ՎԵՐՋԱՑԱՎ

Չնայած որ Գայձ Գաբեղի բոյը կարճ էր, իսկ խելքը՝ երկար, ժողովուրդը վստահեց նրան երկրի պրեզիդենտի պաշտոնը չորս տարվա ժամկետով և երկրորդ անգամ ընտրվելու իրավունքով, ինչպես Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Ճիշտ է, Գայձ Գաբեղը երկիր ղեկավարելու փորձ չուներ, բայց հավես ուներ: Չորս տարի աշխատեց իրեն շրջապատել համախոհներով, ծանոթբարեկամներով, ապա ընտրվեց երկրորդ անգամ և հմուտ ղեկավարի փորձ ձեռք բերեց: Երբ աշխատելու էր լրիվ նվիրումով, պրեզիդենտության ժամկետը վերջացավ... Գայձ Գաբեղը սրտի խորքից գեղեցիկ հայհոյանքներ շպրտեց պաշտոնի ժամկետ որոշողներին:

ՈՏՆԵՐԸ ՉԵՆԹԱՐԿՎԵՑԻՆ

ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռիչարդ Նիքսոնը և Լեոնիդ Բրեժնևը բազկաթոռի մեջ խրված, բանակցում էին: Մեկ էլ Ռիչարդ Նիքսոնը ոտները բարձրացրեց և դրեց սեղանին: Բրեժնևը ևս ուզեց նույնը անել, բայց ոտները չկարողացավ բարձրացնել:

Օ՜, ԺԱՄԱՆԱԿՆԵՐ, Օ՜, ԲԱՐՔԵՐ

Բրեժնևի ծննդյան 70-ամյակը նշելու համար մեկը մյուսի հետևից Մոսկվա էին գալիս սոցիալիստական երկրների ղեկավարները, կապիտալիստական պետություններում կոմունիստական կուսակցությունների լիդերները և բոլորը խոսքները մեկ արած, թութակի նման մեծարում նույն խոսքն էին ասում, որ թանկագին Լեոնիդ Իլյիչ Բրեժնևը հանդիսանում է Սովետական Միության կոմունիստական կուսակցության և միջազգային բանվոր դասակարգի կարկառուն լիդերը, փոխարենը արժանանում հոբելյարի գրկախառն բուռն պաչերին, ապա իրենց պատվավոր միսիան կատարած համարելով, շտապ վերադառնում էին իրենց երկրները:

Դե ե կ վարդապետ և դիմացիր նման քծնանքին:

ԱԲԽԱԶԻԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՉՈՒՆԻ

Սերգեյ Բաղապշը, նկատի առնելով հակառակը, ի լուր աշխարհին հայտարարեց. «Աբխազիան Վրաստանի հանդեպ տարածքային պահանջներ չունի», որը դարձավ թևավոր խոսք:

Ափսո՜ս, այդ հայտարարությունը եղավ Աբխազիայի պրեզիդենտի կարապի երգը:

ԱՆՀԱՆԳԻՍՏ ԳԻՇԵՐ

Սոսկալի, մահաբեր օրեր էին վրաց-աբխազական պատերազմի ժամանակ Սուխումի, Գագրայի, Օչամչիրայի և Գուլրիփշի տարածքների բնակիչների համար, ուր վրաց զինյալները գործում էին ըստ քմահաճույքի. անմեղ մարդկանց սպանությունները, թալանը, բռնաբարությունները սովորական էին դարձել:

Ինչպես շուտով հայտնի դարձավ, երբ վրաց բանակը հարձակվեց Աբխազիայի վրա, երեք օր սնվում էր տեղական բնակիչներին թալանելու հաշվին:

Անելանելի վիճակ էր հատկապես հայերի համար: Հայերին արգելում էին դուրս գալ Աբխազիայի սահմաններից: Այդ հարցով, որպես Աբխազիայում «Սովետական Վրաստան» թերթի սեփական թղթակից, դիմեցի Սուխումի պարետ գնդապետ Ծիվլիլիձեին:

- Հայերը թալանում են վրաց փախստականներին, - պատասխանեց նա, - մենք տեսագրություն ունենք Սոչիից, թե ինչպես են ձեր հայերը խեղճ վրացիներից խլում ավտոմեքենաները: Երբ Սպիտակում երկրաշարժ եղավ, երկու ժամ հետո ես այնտեղ էի:

Պարետի պատասխանը ինձ չգոհացրեց: Շենքից դեռևս դուրս չէի եկել, երբ խստորեն հետ կանչեց, պահանջեց անձնագիրս և գրի առավ հասցես:

- Մենք պետք է իմանանք, թե ով է գալիս մեզ մոտ, - ասաց Ծիվլիլիձեն և վերադարձրեց անձնագիրս:

Ես ընկա մտահոգության մեջ, որ գիշերը, ինչպես դա լինում էր ստալինյան բռնապետության տարիներին, կգան իմ հետևից: Երկար մտատանջվելուց հետո որոշեցի նորից գնալ պարետի մոտ: Հետս տարա Հայաստանում երկրաշարժի սարսափի մասին ռուսերեն հրատարակված հաստափոր գիրքը:

- Դուք եղել եք Սպիտակում երկրաշարժից տուժածներին փրկողների մեջ, այս գիրքը այդ մասին է, վերցրեք ձեզ:

Գիրքը վերցրեց, թեթևակի թերթեց և ասաց, որ անպայման կկարդա:

Ես թեթևացած շունչ քաշեցի, չնայած ամբողջ գիշեր անհանգիստ մնացի:

ՆՈՐ ՏԵՍԱԿԻ ԶԵՆՔ

Վրաց-աբխազական պատերազմի օրերին Մոսկվայի հեռուստատեսությունը իր հաղորդմամբ անակնկալի բերեց ոչ միայն հեռուստադիտողներին, այլև երկրագնդի հռչակավոր զինագործներին:

Հեռուստատեսությունը պաշտոնապես հայտարարեց.

«Այսօր աբխազները կիրառեցին զենքի նոր տեսակ»:

Պատերազմը ավարտվելուց հետո պարզվեց, որ աբխազ գրոհայինները հրանոթային արկի մեջ լցրել էին ամյակ, որը քիմիական պարարտանյութ է և սուր հոտ ունի: Դա սարսափեցրել էր վրաց բանակին:

ԱՐԵՎԸ ՔԱՐԵ ԳՈՒՆԴ Է

Գայձ Գաբեղը և Դիլիմ Գարաբեղը ծովափին կանգնած, հիանում էին մայր մտնող արևով:

- Այդ ինչպե՞ս է, Գայձ Գաբեղ, որ արևը խրվեց ծովը, իսկ ջուրը չի եռում, - հարցրեց հետաքրքրասեր Դիլիմը:

- Որովհետև արևը երկնային մի խոշո՜ր քարե գունդ է, ներկված կարմիր ներկով, բայց թե ո՛վ է ներկել և ե՞րբ, չեմ կարող ասել, կգա ժամանակը և այդ էլ կպարզվի, - պատասխանեց իմաստուն տիեզերագետ Գայձ Գաբեղը:

ՊԻՏԻ ԿՈՉՎԵՆ ԾԱՂԿԱՆՈՑՆԵՐ

Այժմ գերեզմանոցներում շիրիմները զարդարում են բազմագույն ու անբույր արհեստական գեղեցիկ ծաղկատեսակներով, որոնք երբեք չեն թոշնում: Բացառված չէ, որ գերեզմանոցները շուտով կոչվեն ծաղկանոցներ: Ավելի լավ:

ՈՐՏԵՂԻՑ ԵՆ ԱՄՊԵՐԸ

Գայձ Գաբեղը ուսուցչի հարցերին միշտ էլ ճիշտ պատասխաններ էր տալիս: Մի օր հարգելին հարցրեց իր սիրելի աշակերտին.

- Ասա, Գաբեղ ջան, որտեղի՞ց են երկինք բարձրանում ճեփ-ճերմակ ամպերը:

- Ճեփ-ճերմակ ամպերը երկինք են բարձրանում բամբակի դաշտերից, - անմիջապես պատասխանեց սիրելի աշակերտը:

- Իսկ թանձր ու մութ ամպե՞րը որտեղից են բարձրանում:

- Դա էլ գիտեմ, - անհապաղ վրա տվեց աշակերտը, - պղտոր գետերից:

ԽԵԼՈՔ ՊԱՏԱՍԽԱՆ

- Ինչո՞ւ օդանավերը թռչում են ամպերից վերև, - հարցրեց աշակերտը:

- Որպեսզի ամպերի մեջ թևերը չթրջվեն, - պատասխանեց ուսուցիչը:

ՄԻԱԿ ԵԼՔԸ

Այժմ աշխարհում այնքա՜ն հարկավոր և ոչ հարկավոր հեռուստաալիքներ և ռադիոձայներ կան, որ այդ աղմուկ-աղաղակի հեղեղից

փրկվելու համար մարդուն մնում է ականջները առնել փախչելը:
Թե ու ր, դա էլ է հարց...

ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒՄ ԵՆ ԳԱԶԱՆՆԵՐԻՆ

Այսօր բեմերում լսվող երգերը ավելի շուտ վայրի գազանների ճվճվոցներ, գոռոցներ, զռոցներ ու անհարկի ծռմռոցներ, թռչկոտոցներ են, քան սրտահույզ երգեր, որոնք ոչ մի ներդաշնակություն չունեն լսողի մարդկային ու երաժշտական զգացմունքների հետ: Իսկական երգարվեստ գնահատող մարդը ստիպված է ականջները ծեփել մեղրամոմով կամ էլ ցեմենտով:
Գազանների կոնկրետ տեսակների ձայներով էր երգում Իմմա Սումակը, երնի աֆրիկյան կենդանիների ուսումնարանում էր երաժշտական կրթություն ստացել, մինչդեռ նորօրյա երգիչները երևում է նոր գազաններ են հայտնաբերել և անթերի ընդօրինակում են նրանց:

***

Մազլում քաղաքում կազմակերպվել էր երկրում տասնյակ տարիներ չընթերցվող գրքերի ցուցահանդես: Նախկին մի աշակերտ զարմացավ.
- Երբ մեզ դպրոցում ստիպում էին թղթի թափոն հավաքել, որտե՞ղ էին այս հնացած գրքերը:

ԺԱՄԱՆԱԿ ՉՈՒՆԵՑԱՎ

Թբիլիսիի «Մերանի» հրատարակչության խմբագիր Հակոբ Չոբանյանը հանգստանալու եկավ Սուխում, միաժամանակ որոշեց խմբագրել ինչ-որ գիրք: Ես մոլի ձկնորս էի, ինքն էլ ինձ հետ վարակվեց ու ժամանակ չունեցավ գիրքը խմբագրել:

***

Հովակը կարդաց անտիպ ժողովածուս և հայտնեց իր հեղինակավոր կարծիքը.
- Ես կամաչեի այս գործերը ընթերցողին ներկայացնել:
- Դա նրանից է, որ դու ամաչկոտ ես, - պատասխանեցի ես:

ՉՀԱՆԴԻՊԵՑԻ

Գիտեի, որ համալսարանն ավարտելուց հետո Աիդա Թոփուզյանը նշանակվել է լուսավորության նախարարի տեղակալ: Մեր շրջապատի համախոհ և ձեռներեց, աշխույժ ուսանողուհիներից էր: Համալսարանում ստեղծվեց «Ջահ» ուսանողական ակումբ և Աիդան ընտրվեց նրա նախագահ: Ես «Երևանի համալսարան» թերթում մի ջերմ թղթակցություն տպագրեցի այդ մասին, Աիդան կարդաց և շնորհակալություն հայտնեց:
Քսանմեկ տարի էր անցել, երբ վերջին անգամ Երևան էի գնացել: Ցանկացա տեսնվել Աիդայի հետ: Ընդունարանում քարտուղարուհուն ասացի, որ սովորել ենք միևնույն ֆակուլտետում, թույլ տվեք մտնել նրա մոտ առանց նախապես հայտնելու իրեն, թե ով եմ ես և որտեղացի եմ:
- Սուխումից եմ եկել, - ասացի, - ուզում եմ անակնկալ տեսակցություն լինի:
Քարտուղարուհին չցանկացավ լսել:
- Մի ուրիշ անգամ, - ասացի ու նվաստացած ապրումներով դուրս եկա նախարարության շենքից:
Սպասվելիք «մի ուրիշ անգամը» այդպես էլ չեղավ:

ՍԱՂՈԼ, ԹՈՒՐՔԻԱ

Տնաբույծ խառնակիչները ջարդուփշուր արեցին խորհրդային իշխանությունը և փոխարենը ստեղծեցին անկառավարելի պետություններ: Վերացավ սոցիալիստական գյուղատնտեսությունը, դրան հակառակ, ծաղկեց Թուրքիայի հողագործությունը, որի բանջարեղենի և մրգերի կասկածելի որակն ու անհամ բուրմունքը տարածվեց մինչև Ուրալի լեռնազանգվածները: Դրանից հետո ինչո ւ չբացականչել սաղո լ, Թուրքիա :
Սակայն աստված չանի Թուրքիան հրաժարվի իր բարեգործությունից, ինչպես հեռատեսորեն նկատել է ազգային տեսաբան Գայճ Գաբեղը, մարդիկ սովամահ չլինելու համար կսկսեն իրար միս ուտել:

***

Այսօրվա ընթերցողը երևի չի էլ հիշում, որ Խրուշչովի ղեկավարության օրոք Սովետական Միությունում հանդուգն որոշում ընդունվեց արտադրել ավելի շատ միս, ձու, կաթ, հողագործական այլ մթերքներ և առաջ անցնել Ամերիկայի Միացյալ Նահանգներից: Մրցության ամենաթեժ պահին պարենային խանութում հանդիպեցին բուլղարական և սովետական երկու հավ:
- Ինչո՞ւ քո ձվերը անլվա են և զզվելիորեն կեղտոտ, - կարմրելով և անհարմար զգալով, հարցրեց սոցիալիստական Բուլղարիայի հավը:
- Իսկ դու չգիտե՞ս, որ ես ժամանակ չունեմ, շտապում եմ հասնել և անցնել Ամերիկային, - պատասխանեց սովետական հավը և վազեց ձու ածելու:
Ժամանակ անցավ, նույն հավերը կրկին հանդիպեցին, բայց այս անգամ սառնարանում, կողք-կողքի: Բուլղարացի հավը դիմեց սովետական ցեղակցին.
- Տե՛ս, թե ես ինչ թարմ եմ, բնական գույնով, գեր, խնամքով փաթեթավորված, իսկ դու թոշնած, հալումաշ եղած ու կապտած:
Սովետական հավը չկորցրեց իրեն, գտավ պատասխանը.
- Բա՛ն ասացիր, մինչդեռ քեզ մորթեցին, իսկ ես սեփական մահով ընկա սառնարան Ամերիկայի հետ մրցության արշավում:

ԻՆՉՊԵՍ ՓՐԿՎԵԼ ՄԺՂՈՒԿՆԵՐԻՑ

Ամառը սպասված ժամանակից շուտ եկավ: Դրանից լիիրավ օգտվեցին միլիարդավոր մժղուկներն ու մլակները և ագրեսիվ հարձակումներով շրջապատեցին մարդկանց ու անասուններին: Կենսաբանները պարզել են, որ մժղուկները առանձնակի հավեսով խուտուտ են անում մարդկանց մարմնի բաց հատվածները, ապա իրենց պողպատե սուր կնճիթներով ծծում արյունը: Մարդու արյունը մժեղների ամենասննդարար կերակուրն է: Եթե արյան բարձր ճնշում ունեցողներին դա օգտակար է, ապա շատ ու շատերի համար կենդանական աշխարհի այդ արարածների սիրալիրությունը վրդովեցնող է: Որպեսզի իր արյունը մժղուկներին կեր չդառնա և իրեն փրկի նրանց խուտուտներից, Գայճ Գաբեղը գտավ միակ ճիշտ միջոցը. այն ժամանակ, երբ մժղուկների ոհմակը պատրաստվում է աջ ու ձախից զինված հարձակում գործել իր վրա, բերանը լայնորեն բաց է անում, այս անխելքներն էլ առանց երկար-բարակ մտածելու, բուռ-բուռ մտնում են բերանի խոռոչը, մեր հնարամիտ հերոսը անմիջապես փակում է բերանը:
«Դե, հիմա տեսնենք, թե ով ում հերն է անիծում», - ասում է մտքում Գայճ Գաբեղը և սեղմում շրթունքները:
Այդպես է վարվում նաև Դիլիմ Գարաբեղը: Դուք էլ ընդօրինակեցեք առաջավոր փորձը:

ՈՐՏԵՂ ԿԱՊՐԵԻՆ ՁԿՆԵՐԸ

- Հարգելի, եթե գետեր, լճեր, ծովեր և օվկիանոսներ չլինեին, որտե՞ղ պիտի ապրեին ձկները, - ուսուցչին հարցրեց աշակերտը:
- Քանի որ ջուրը անձրևի տեսքով գալիս է ամպերից, ուրեմն ձկները կապրեին ամպերի մեջ և թռչնի թևեր կունենային, - աշակերտի հարցին սրամիտ պատասխան տվեց կենսաբանության դասատու Գայճ Գաբեղը:

***

- Իմացա՞ր, Գայճ Գաբեղ, Սև ծովի հատակով գազատար խողովակներ անցկացրին:
- Երևի ձկներին կապույտ վառելիք են տալու, Դիլիմ:
- Դա իր հերթին, բացի դրանից, պատկերացնու՞մ ես, ջրի մակարդակը մեկ սանտիմետրով բարձրացել է:
- Ուրեմն ձկները նաև ջրի պակաս չեն զգա:

***

Որբերը թույլ սիրտ ունեն և շուտ են լաց լինում, շուտ ու շատ հուզվող են և ուրախության, և տխրության պահին: Ես այդպիսին եմ: Հայրս անհայտ մնաց նեմեցի հրահրած կռվում: Մանկությունս էլ անցավ առանց մոր...
Որբերը թույլ սիրտ ունեն և շուտ հուզվող են, որովհետև դաժան իրականությունն է նրանց ճակատագիրը բնորոշել:
Ողբի հայրենիք, որբի հայրենիք:

ՀԱՄԵՍՏՈՐԵՆ

Գայճ Գաբեղը շուկայում կարտոֆիլ էր վաճառում: Մոտեցավ Դիլիմը:
- Քանիսո՞վ է կիլոգրամը:
- Երեսուն ռուբլի: Համեստորեն:
- Ինչո՞ւ համեստորեն:
- Որովհետև կարող էր ավելի թանկ լինել:

***

Միլիցիա, արմատը ռուսական милый բարեհնչյուն բառից է, և իզուր չէ. որ ժողովուրդն ասում էր. моя милиция меня бережет, իսկ այժմ անվանեցին սարսափեցնող полиция, արմատը полить բառն է, որ նշանակում է այրել, ոչնչացնել, հերն անիծել: Ժողովուրդը չի ընդունում սիրտը ահուսարսափ լցնող ոստիկան անվանումը, բայց

ժողովրդական պետություն է, լսողն ով է...

ՀՆԱՐԱՄԻՏ ՎԱՉԻԿԸ

Թբիլիսիի Նավթլուղի կայարանից զորակոչիկներով լի մարդատար գնացքը շարժվեց և յոթ օր հետո մեզ հասցրեց Ուկրաինայի Վինիցայի մարզի Վապնյարկա գյուղաքաղաքը: Այստեղ, օդաչուական դպրոցում, դարձանք կուրսանտներ: Ամեն մեկս եկել էր Սովետական Միության տարբեր վայրերից, անծանոթներ էինք: Հնարամիտ գտնվեց լաքրայեցի Վաչիկը: Խանութում գնեց վաթսուն ռուբլու քաղցրավենիք և վաշտի տղաներին հրավիրեց՝ով ինչքան ուզում է, թող ուտի: Ծառայության առաջին օրերը տրված կերաբաժինը չէր կշտացնում, ուստի կուրսանտները վրա թափվեցին, ախորժակով ոչնչացրին քաղցրավենիքի կույտերը: Այդ օրվանից բոլորս էլ մտերիմներ դարձանք:

ԴԻԼԻՄԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Մի օր ավտոմեքենայով գնալիս, Դիլիմ Գարաբեղը Գայճ Գաբեղին հայտնեց իր ցանկությունը.

- Չես պատկերացնում, Գայճ Գաբեղ, թե ո՞նց եմ ուզում մի անգամ քեզ հետդ ընկնել Մոսկվա:
- Ինչո՞ւ ինձ հետ, ի՞նչ ես մտածել:
- Ուզում եմ քեզ ցույց տալ, թե ինչպե՞ս ես վարպետորեն, ձկան ճարպկությամբ դուրս կպրծնեմ մոսկովյան փողոցների մշտական ավտոխցանումներից:
- Է, ի՞նչ տարբերություն, Մոսկվայում ես, թե՞ Սոչիում, դե ցույց տուր վարպետությունդ, էլ ինչի ենք երկու ժամ է սակվել մի տեղում: Սոչիի փողոցների խցանումները ինչո՞վ են պակաս մոսկովյան փողոցների խցանումներից:

ՍՐՏԻ ԼԵԶՈՒՆ

Լողափում Գայճ Գաբեղը ծանոթացավ արևից բրոնզացած մի գեղեցկուհի հայ աղջկա հետ:

Ծանոթության ընթացքում պարզվեց, որ գեղեցկուհին բացի հայերենից, գիտի նաև մի քանի այլ լեզուներ: Աղջիկը արդեն տաքուկ անկյուն էր գտել Գայճ Գաբեղի սիրավառ սրտում, բայց կարկամում էր արտահայտել իր բոցկլտացող սերը:

- Ուրախ եմ, - կարմրելով ասաց Գայճ Գաբեղը, - որ դու մի քանի լեզուներ գիտես, բացի իմ սրտի լեզվից:

Աղջիկը վարակիչ ժպտաց:

ՄԵԾ ՓՈՐԸ ՉԻ ԽԱՆԳԱՐՈՒՄ

Դիլիմը երկար ժամանակ չէր տեսել Գայճ Գաբեղին: - Այդ ինչ մեծ փոր ես գցել, Գաբեղ, - երբ հանդիպեցին, ասաց Դիլիմը, - փորդ առաջ է ընկել, իսկ ինքդ հետևից գնում ես:

- Փորս ինձ չի խանգարում, - արդարացավ Գայճ Գաբեղը:
- Գուցեև այդպես է, համաձայն եմ, իսկ խեղճ կնոջդ մասին մտածե՞լ ես...
- Ե՞ս ինչու պիտի մտածեմ, իր մասին ինքը թող մտածի...

ԴԻԼԻՄԸ ՀԱՐՑՐԵՑ

Դիլիմ Գարաբեղը Գայճ Գաբեղին մի օր ասաց.

- Մազլումում ոչ մի բնիկ մարդ չկա, բոլորն էլ եկել են զանազան բնակավայրերից:
- Ո՞նց թե բնիկ մազլումցի չկա, ես արդեն քառասուն տարի ապրում եմ այստեղ:
- Ապրում ես, այո և արմատավորվել ես, բայց մի մոռանա, որ դու եկել ես Գերգեմիշից, - ուղղեց Դիլիմը Գայճ Գաբեղին:

ԴԻԼԻՄԻ ԹՈՒՅՆԸ

Դիլիմ Գարաբեղը անասելի թիթիզ բնավորություն ուներ, ինչպես ասում են, նույնիսկ իր կեղտի հետ չէր հաշտվում: Այնքան նեղսիրտ էր, որ ասես մեջը օձի թույն էր ձուլալվել:

Եղավ, որ մի շոգ օր գոմի մոտ ձմռան համար խոտ դիզելիս, աննկատելիորեն օձը կծեց ոտը, սողունի ատամը մնաց ոտի մսի մեջ:

- Այդ ե՞րբ էր, - հարցրեց Գայճ Գաբեղը:
- Երեք օր առաջ:
- Եվ դու սա՞ղ ես մինչև հիմա:
- Ինչպես տեսնում ես՝ ողջ և առողջ եմ:
- Բա օձը ինչ եղավ, չսպանեցի՞ր:
- Սողունը տեղնուտեղը սատկեց ոտիս թույնից...

ՄԱԶԵՐԸ ՉԵՆ ԾԵՐԱՆՈՒՄ

- Գայճ Գաբեղ, Ինչպե՞ս է, որ մեր հասակի կանայք մեզ հետ պառավեցին, իմ ու քո մազերը ճերմակեցին, ծերացան, իսկ նրանց մազերը չճերմակեցին, միայն գունափոխվեցին, - հարցրեց Դիլիմը:
- Դիլիմ ախպեր, եթե քո գլուխն էլ ներկերով սվաղեն, քո մազերն էլ չեն ծերանա, - եզրակացրեց Գայճ Գաբեղը:

ԱՅԴՊԵՍ ՄՏԱԾԵՑ

Գայճ Գաբեղը համախոհներով սեղանի շուրջը նստած, գինի խմում, քեֆ էր անում: Այդ միջոցին հայտնվեց գինովցած Դիլիմ Գարաբեղը: Սեղանին դրված էր գինով լի շիշը, առանց մեկին հարցնելու, անմիջապես վերցրեց գինով շիշը և ուզում էր գնալ:

- Շիշը տեղը դիր, - վրա տվեցին սեղանակիցները:
- Տանեմ բացեմ բերեմ, - փորձեց արդարանալ Դիլիմը:
- Քեզ ո՞վ խնդրեց, որ տանես բացես, - ջղայնացավ Գայճ Գաբեղը:
- Ինձ թվաց, թե դուք խնդրեցիք, ես այդպես մտածեցի:

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՋԻՆԸ ՎՐԱՑԻ Է

Մի վրացի մասնավոր զրույցի ժամանակ պնդեց, թե գիտե՞ս, որ ռուսական իշխանապետ Պետրոս Առաջինը վրացի է եղել:

- Բա որ գիտեիր դա, մինչև հիմա ինչպե՞ս է, որ կարողացել ես լռել:
- Նոր եմ հասկացել:
- Հետո՞:
- Հետո այն, որ Պետրոս Առաջինը վրացի է:
- Ի՞նչ ապացույցներ ունես:
- Նախ լսել եմ, որ մայրը ունեցել է վրացի կավալեր, իսկ որ վրացու որդի է, վկայում են բեխերը:

ՀԱՎԻ ԶԱՐՄԱՆՔԸ

Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս Կոնստանտին Ուստինովիչ Չեռնենկոն, չնայած տկար լինելուն, առանց կողմնակի օգնության կարողացավ նստել Կենտկոմի Գլխավոր քարտուղարի և Խորհրդային Միության Գերագույն խորհրդի նախագահի աթոռներին:

***

Չեռնենկոյին սեփական բնակարանում դեպուտատական մանդատ հանձնելիս մեջքից բռնեցին, որպեսզի մանդատը կարողանա ստանալ կանգնած վիճակում:

ՇԵՎԱՐԴՆԱԶԵՆ ԽՆԴՐԵՑ

Իմ մեզրել ծանոթ Վասիլին երկաթուղային կայարանում միլպետ էր: Նրան պաշտոնից ազատել էին ինչ-որ անորոշ պատճառներով, իսկ ինքը համաձայն չէր նման որոշման հետ, ուստի բազմաթիվ վերադաս մարմինների դռներ ծեծեց: Համարյա ամենուր մտան իր դրության մեջ և, ինչպես միշտ, ոչնչով օգնել չկարողացան: Երկար սպասումներից հետո, վերջապես կարողացավ ընկնել Էդուարդ Շևարդնաձեի ընդունարան: Վրաստանի կոմկուսակցության Առաջին քարտուղար Շևարդնաձեն ուշադրությամբ լսեց Վասիլիին, ապա վեր կացավ աթոռից և երկար աշխատասենյակից մինչև ելքի դուռը ուղեկցեց հայցվորին:

Դա դեկտեմբեր ամսվա վերջերն էր: Հրաժեշտից առաջ Շևարդնաձեն ասաց.

- Տանը իմ անունից շնորհավորիր կնոջդ ու երեխաներիդ Նոր տարին:
- Հիմա մտածում եմ, - ասում էր Վասիլին, - ընտանիքիս հոգսը ամենևին էլ Շևարդնաձեի վեջը չէր, բայց ես ամենուր այդ մասին պատմում եմ և բարձրացնում Առաջին քարտուղարի մարդասիրության հեղինակությունը:

ԱՉՔԵՐԸ ՃԱԿԱՏԸ ԵԼԱՆ

Սովետական Միության արտաքին գործերի նախարար Շևարդնաձեն հանդիպեց ԱՄՆ-ի պետքարտուղար Շուլցին և անմիջապես հետաքրքրվեց.

- Ինչպե՞ս են տանը. կինդ, երեխաներդ հո հիվանդ չե՞ն...

Քանի որ արտասահմանում, հատկապես պետությունների ղեկավարների միջև ընդունված չէ նման արտառոց հարց տալը, զարմանքից Շուլցի այքերը ճակատը ելան...

***

Մի երեխայի հարցրի.

- Փոքրիկ, ինչպե՞ս է անունդ:

Ասաց.
- Мальчик.

ՄԱՅՐԻԿԻՆ ՍԻՐՈՒՄ ԵՆ

- Վովիկ ջան, ասա, դու խորովա՞ծ ես սիրում, թե՞ մայրիկին:
- Խորովածը չեն սիրում, ուտում են, իսկ մայրիկին սիրում են:

ՄԱՐԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հինգ տարեկան Մարկը լսել էր, որ մայրը երեխա է բերելու, ասաց.
- Մա, ջուր մի խմի, երեխայի գլխին կլցվի:

ՊԱՐԱՇՅՈՒ՞ՏԸ ՈՐՏԵՂԻՑ

- Իրիկունը տատս պատմում էր, - ասաց Մանուշը, - որ մարդիկ առաջ ապրել են Մարսի վրա, իսկ երբ ջուրը վերջացել է, իջել, եկել են երկիր, որովհետև երկրի վրա ինչքան ուզես ջուր կա:
- Հետաքրքիր է, որտեղի՞ց են ճարել այդքան պարաշյուտ, - զարմացավ Վովիկը:

ԳԱՅՃ ԳԱԲԵԴԸ ՉՀԱՎԱՏԱՑ

Այն ժամանակ բջջային հեռախոս չկար: Ինչպես մինչև օրս հիշում եմ, ռադիոհաղորդումների հանրահռչակ հաղորդավար Դիլիմ Գարաբեդը առավոտվանից գինովցել էր: Թարմ պես շուտով եթեր էր հաղորդվելու վերջին լուրեր, իսկ Դիլիմը չկար: Խմբագիր Գայճ Գաբեդը անհանգստացավ: Այդ միջոցին հնչեց հեռախոսազանգը: Դիլիմն էր զանգողը:
- Գայճ Գաբեդ, կներես, - ասաց նա, - անտառ էի գնացել, մեքենան խրվեց ցեխը, տեղավազք է անում, հանել չեմ կարողանում, վերջին լուրերի հաղորդմանը չեմ հասնի, կանչիր փոխարինող:
- Վիճակդ հասկացա, - չհավատաց Գայճ Գաբեդը, - բայց ասա, Դիլիմ, անտառում ո՞նց գտար հեռախոս:

ՀՆԱՐԱՄԻՏ ՊԱՏԱՍԽԱՆ

- Ամպամած եղանակին քամին ինչի՞ համար է, - հարցրեց ուսուցիչ Դիլիմ Գարաբեդը գերազանցիկ Գայճ Գաբեդին:
- Քամին նրա համար է, որպեսզի չորացնի ամպերը, որ անձրև չանի, - համարձակ պատասխանեց աշակերտը:
- Ապրես: Իսկ շոգ ու տոթ եղանակին ինչի՞ է քամի անում:
- Տոթ եղանակին քամին չորացնում է օդի խոնավությունը, որպեսզի շնչելը հեշտ լինի, - գերազանցիկ Գայճ Գաբեդը նորից գտավ ճիշտ պատասխանը:

ԻՆՉՈ՞Ւ Է ՎԻԶԸ ԵՐԿԱՐ

- Գայճ Գաբեդ, դու երկար տարիներ ապրել ես Ավստրալիայում, կարո՞ղ ես ասել, թե ինչո՞ւ է այդքան երկար ընձուղտի վիզը:
- Կասեմ, Դիլիմ, ընձուղտի վիզը բարձր ու երկար է նրա համար, որպեսզի հեռվից տեսնի սիրուհուն, վազի նրա մոտ և սիրահետի:

ԻՆՉՈ՞Վ Է ԳՐՈՒՄ

- Ինչպե՞ս ես դու գրքեր գրում, - հետաքրքրվեց մի տառաճանաչ երեխա:
- Սկզբում գրում էի փետուրով, հետո՝ գրիչով, այնուհետև՝ գրամեքենայով, իսկ այժմ՝ համակարգիչով, - պատասխանեց Գայճ Գաբեդը:

ՍՊԱՌՆՈՒՄ Է ՎՏԱՆԳ

Երկրագնդում «սև ոսկի» կոչվող վառելիքը գնալով նվազում է, մինչդեռ ամենուր շռնդալից թափով ավելանում են ավտոմոբիլները, տրակտորները, օդանավերը, բենզինով, նավթով, սոլյարկայով աշխատող բազմապիսի շարժիչները: Թե ինչպիսի նենգ վտանգ է սպառնում ավտոտերերին, ցույց կտա մոտակա ապագան:

Ի՞ՆՉ ՕՐԻ ՀԱՍԱՆՔ

Սովետի ժամանակ գեղարվեստական գիրք գնելիս գրախանութներում հաճախ պարտադրում էին նաև գնել հավելյալ հրատարակություններ: Ընթերցողը գեղարվեստական գրքի խաթեր անտրտունջ գնում էր նաև այդ հաշվապահական, տեխնիկական, հասարակական, դարակներում տարիներով «պառաված» խրթիբրթի գրքերն ու բրոշյուրները, ինչպես նաև կոմունիստական կուսակցության Քաղբյուրոյի անդամների ճառերը և զանազան ելույթները պարունակող հաստափոր հրատարակությունները, իսկ խանութից դուրս գալիս գցում էր աղբարկղ: Այժմ ի՞նչ օրի հասանք, նույնիսկ գեղարվեստական գիրք կարդացող չկա: Չլինի թե դրանք էլ արժանանան աղբարկղ ընկնելու բախտին:

ՀԱԳԵՑԱՎ ԱՉՔԵՐՈՎ

Հուլիս ամիսն էր: Արդեն ծերացած Դիլիմ Գարաբեդը զովանալու նպատակով գնաց ծովափ: Լողափը ծածկված էր կանանց համարյա կիսամերկ, բրոնզացած մարմիններով: Դիլիմին անչափ կլանեց այդ տեսարանը և իր սեռական գերզգայականությունը հագեցրեց... աչքերով:

***

Դիլիմ Գարաբեդը ամեն հանդիպելիս Գայճ Գաբեդին, խմիչքի փող էր ուզում նրանից: Մի օր էլ Գաբեդը Դիլիմի ձեռին հազար ռուբլի տեսավ:
- Այդ գումարը, Դիլիմ, գիտեմ, դու հիմա պիտի ծախսես, - ասաց Գայճ Գաբեդը, - լավ կանես տաս ինձ, իսկ վաղը, երբ ինձանից ուզես, անմիջապես կտամ քեզ:
- Չեմ կարող տալ, - պատճառ բռնեց Դիլիմը, - այս հազար ռուբլին միայն այսօրվա համար է:

ՓՆԹՓՆԹՈՑԻՆ ՎԵՐՋ ՏՎԵՑ

Գայճ Գաբեդը բոյ-բուսաթով երիտասարդ էր, երբ ծնողները ամուսնացրին կոլոտ Աշխենի հետ: Հենց ամուսնական առաջին գիշերը նորաթուխ ամուսինը մոտիկից զննեց կարճահասակ կնոջը և տհաճություն զգաց: Այնուհետև հաճախ երեսով էր տալիս նրա կոլոտ լինելը: Աշխենը գեղջկական աղջիկ էր և համբերությամբ տանում էր ամուսնու դժգոհ փնթփնթոցը: Ժամանակ անցավ, Գայճ Գաբեդը օր-օրի ոչ թե գիրացավ, այլ ուռավ, փքվեց: Ծանոթները սկսեցին նրան անվանել պշտկած:
Ուռած փորը երկար բոյը քաշեց ներքև, կարճացավ, հավասարվեց կնոջ բոյին և միայն այն ժամանակ վերջ տվեց անվերջ փնթփնթոցին:

ԱՆԿՈՉՈՒՄ ԱՐՏԻՍՏՆԵՐ

Որքա՞ն դժբախտ էին մեր անցյալի ՝դերասանները, երգիչները, արտիստները: Եվ զարմանում եմ, թե ո՞նց էին խեղճերը յոլա գնում առանց վաստակավոր կամ ժողովրդական արտիստի կոչում ունենալու: Նրանք միայն մի պարտականություն ունեին. բեմ բարձրանալ իրենց տաղանդը ժողովրդին նվիրաբերելու համար:
Անգերազանցելի ասմունքող եվլախ-մինգեչևանցի Արտաշես Մեյրոյանը ոչ վաստակավոր էր և ոչ էլ ժողովրդական արտիստ, բայց Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, ինչպես նաև Աբխազիայի կոլտնտեսություններում և դպրոցներում Հովհաննես Թումանյանի պոեմներն էր արտասանում, հուզմունքով լցնում լսողների սրտերը, տոնական տրամադրություն պարգևում բոլորին: Առանց թևավոր կոչումների իսկական ժողովրդական ասմունքող էր: Չգիտեմ ինձա-նից բացի կա՞ մեկը, որ այսօր հիշի Արտաշես Մեյրոյանին: Եթե ունենար վաստակավոր կամ ժողովրդական արտիստի կոչում, երևի թե հիշեին...

***

Կառավարությունը որոշեց լայն թափ հաղորդել միջին և փոքր բիզնեսի ընդլայնմանը և նպաստեց նրան, որ օլիգարխները ամենուր կառուցեն «Մագնիտ» կոչվող մեծածավալ գիպերմարկետներ:

***

Դիլիմը զանգեց Գայճ Գաբեդին.
- Իմացա՞ր, որ պրեզիդենտ Մեդվեդևը սեպտեմբերի մեկին այցելել է յոթերորդ դպրոց:
- Ցա՛, չեմ լսել:
- Թոռնիկս այդ դպրոցում է սովորում:
- Ա՛, ա՛, դրա համար էլ այցելել է, - պատասխանեց Գայճ Գաբեդը:

***

Տարիներ առաջ Գայճ Գաբեդը ռմբարկու ֆուտբոլիստ էր: Մոսկվայում մի առաջատ թիմի հետ խաղալիս Գայճ Գաբեդը մրցակցի դարպասը խփեց երկու գնդակ: Ըստ երևույթին մի ֆանատ ֆուտբոլասերի դա՛ դուր չեկավ և տրիբունայից ամբողջ ձայնով բղավեց՝ սևահետ ու յք: Գայճ Գաբեդը նկատեց նրան և բոլորին լսելի բարձրաձայն հարցրեց.
- Դա քեզ կի՞նդ է ասել:

***

Գայճ Գաբեդը արդեն ուներ մի աղջիկ երեխա, կինը նորից գնաց ծննդատուն: Գաբեդն ուզում էր, որ երկրորդ երեխան տղա ծնվի,

բայց ծնվեց աղջիկ: Երբ այդ մասին հայտնեցին Գայճ Գաբեղին, նա խորամանկ փիլիսոփայեց.
- Թող աղջիկ լինի, համոզված եմ, որ այդ աղջկա երեխաները ի՛մ թոռները կլինեն:

***

Գայճ Գաբեղը մի օր ջահելների մոտ գլուխը գովեց, որ ինքը տարիքը չի զգում:
- Իսկ քանի՞ տարեկան կլինես, - հարցրեց մի երիտասարդ:
- Ուղիղ քառասուն տարեկան եմ:
- Այդ ո՞նց կլինի, - չհամբերեց Դիլիմ Գարաբեղը, որ ներկա էր զրույցին, - ես վաթսուն տարեկան եմ, ծնվել ենք նույն թվականին:
- Այո, ես քառասուն տարեկան եմ, - պնդեց Գայճ Գաբեղը, - գիշերը քնածս ժամերը ես չեմ հաշվում:

ՄԻԱՅՆ ԹԵ ԳՆԱՐ

Դիլիմ Գարաբեղը շրջապատում ակտիվ ագիտատոր էր: Մարդիկ հավատում էին նրա խոսքերին և պատրաստ էին ջրի ու կրակի միջով անցնել նրա համար: Եվ երբ քաղաքագլխի պաշտոնը թափուր մնաց, առաջարկեցին նրա թեկնածությունը: Դիլիմը ընտրվեց քաղաքագլուխ: Շուտով պարզվեց, որ բնակիչների և քաղաքի հոգսերով զբաղվելու «գլուխ» չունի, դատարկախոսի մեկն է, մինչդեռ վերադասին դա չէր անհանգստացնում, ավելին, որոշեցին առաջ քաշել ավելի բարձր պաշտոնի: Դրա համար նշանակեցին հանրաքվե, որպեսզի ժողովուրդը տա իր համաձայնությունը իրենցից գնալու համար: Քաղաքի բնակիչները միմյանց հրմշտելով լցվեցին ընտրական տեղամասեր ու միահամուռ քվեարկեցին Դիլիմի օգտին:
- Տեսա՞ր, Գայճ Գաբեղ, - հպարտացավ Դիլիմը, - որպեսզի անցնեմ նոր պաշտոնի, բնակիչները 95 տոկոսով քվեարկեցին իմ օգտին, ապրեն, գիտեն գնահատել ակտիվ, ձեռներեց ազնիվ աշխատողին:
- Ընտրողները չսխալվեցին, քվեարկեցին, որ որքան շուտ ազատվեն քեզանից, այնքան լավ իրենց համար, - եզրափակեց բոլորի միտքը Գայճ Գաբեղը:

ՓԱՓԱԽԸ ԴՐԵՑ ՁԻՈՒ ԹԱՄԲԻՆ

Մազլում գյուղի հնաբնակ Գայճ Գաբեղը ոչ միայն շակաջի, այլև թասիբով մարդ էր: Սիրում էր, երբ համշենցիները իր հետ վերաբերվում էին հարգալից, գնահատում նրա իմաստուն խրատները: Նամուսը, պատիվը նրա համար բարձր էր ամեն տեսակի արժանիքներից: Գայճ Գաբեղի պատվախնդիր լինելը հայտնի էր ոչ միայն Համշենում, այլև Ջանիկ, Սյուրմենե, Օրդու գավառներում:
Համշենի գավառապետը մի անգամ Գայճ Գաբեղին կանչեց իր մոտ: Գավառապետի մոտ հո ոտով չպիտի՞ գնար: Գաբեղը միշտ էլ հարգանքով էր վերաբերվում գավառապետին: Դիլիմ Գարաբեղը իր մոտ ընկերն էր, ուստի պատվիրեց.
- Դիլիմ, վաղը ինձ համար թամբիր երկու ձի:
Դիլիմը, որ լավ գիտեր ավագ ընկերոջ բնավորությունը, առանց հարցնելու միտքը, այդպես էլ արեց:
Հաջորդ առավոտյան Գայճ Գաբեղը մոտեցավ ձիերից մեկին, գլխից հանեց գառան մորթուց պատրաստված գեղեցիկ փափախը, դրեց թամբին:
- Այս ձին թող առջևից գնա, Դիլիմ, - ասաց և ինքը նստեց հետևից գնացող ձիու թամբին:

ՉԻԿՈՒՄ ԵՆ ՀԱՃՈՒՅՔԻՑ

Նիկիտա Խրուշչովը գյուղատնտեսության աշխատողների խորհրդակցություններին մշտապես մասնակից էր դարձնում անասնաբույժ-գիտնական Բայբուրթցյանին: Հայ գիտնականը իր ելույթներում պարզապես խոսում էր անասունների արհեստական բեղմնավորման մասին, որը նորություն էր սովետական անասնապահության բնագավառում: Բայբուրթցյանի մեթոդը այժմ մասսայական է դարձել. անասուններին զրկում են բնական բեղմնավորման գերագույն հաճույքից: Չլինի՞ թե այդ վիրավորանքն է պատճառը, որ բուղաները այժմ սարսափելիորեն անհնազանդ, կատաղի են դարձել, իսկ երինջներն ու տինկին կովերը ամաչելուց համեստորեն լռում են:

ՊԱՏՎԱՍԵՐ ԽՈՆՈՒՄԸ

- Չգիտեմ ի՞նչ կարծիքի ես դու Խոնումի մասին, բայց իմ համոզմամբ պատվասեր կին է, - ասաց Գայճ Գաբեղը Դիլիմին:
- Եթե գաղտնիք չէ, ասա տեսնեմ, ինչի՞ ես նման եզրակացության եկել Խոնումի մասին, - զարմացավ Դիլիմը:
- Նրա համար, Դիլիմ, որ երբ Խոնումի տան հարևանությամբ կառուցում էի այս խանութը, նա ամեն օր անիծում էր ինձ, այժմ ամաչում է խանութ մտնել:

***

Գայճ Գաբեղը և Դիլիմ Գարաբեղը ուսանողներ էին: Զեյթունի թաղամասից առավոտյան մի կերպ բարձրանում էին համար 23 ավտոբուսը, վարորդին վճարում 5 կոպեկ և գնում մանկավարժական ինստիտուտ: Այնպես պատահեց, որ Դիլիմը մանր փող չուներ, գրպանում միայն 25 ռուբլիանոց էր, ցույց էր տալիս վարորդին: Է, առավոտյան վարորդին խուրդան որտեղի՞ց: Դիլիմը ինստիտուտ էր մեկնում առանց վճարելու: Դա նկատեց Գայճ Գաբեղը և ընկերոջը ասաց.
- Դիլիմ, քո քսանհինգանոցը ավելի ուժ ունի, քան իմ մշտական տոմսը:

***

Պատմական գիրքը ոչ այլ ինչ է, քան անցյալի իրական դեպքերի, անցուդարձի, մարդկային հարաբերությունների աղավաղված շարադրանք: Դրանում լրիվ համոզված եմ ականատեսի իմ աչքերով և սեփական անսխալ ընկալումներով:

***

Պետական Դուման մարդասիրական հարյուրավոր օրենքներ է ընդունում և տալիս իրավապահ մարմինների տնօրինությանը, որոնց աշխատակիցները այդ օրենքները կիրառում են կաշառքի համեմունքով:

Հ Ո...

Ծովափում բնակվող մարդիկ ավտոտնակների վրա հեռատեսորեն մասսայականորեն ավելացրին մեկ կամ երկու հարկ և դարձրին բնակելի: Կենտրոնական օրենսդրական մարմինները դա համարեցին անօրինական, որովհետև տեսան, որ ամռան ամիսներին ավտոտնակների տերերը կենում են այդ հարկերում, իսկ սեփական բնակարանները վարձով հանձնում հանգստացողներին: Որոշեցին քանդել: Բայց պարզվեց, որ ավտոտնակների տերերի մեջ շատ կան ազդեցիկ պաշտոնավորներ և օլիգարխներ, որոնց ոչ միայն էքսկավատորի թաթը, նույնիսկ հրանոթը խոցել անկարող է: Ապա բերանները ջուր առած, լռեցին:
- Ինչո՞ւ ձեր ազդեցիկ որոշումը մնաց թղթի վրա, - հարցին, լավատեսորեն պատասխանում են.
- Հետո ի՞նչ... ռուսաստանցիներ են հո...

ՉՈՓԸ ՉԵՆ ՏԱՆԻ

Սովետի օրոք մարդիկ սեփական տներում կամ բնակարաններում ապրում էին առանց ահուվախի, լավագույն դեպքում դուռն էին կողպում, որովհետև հավասար աղքատ էին, գողանալու բան չունեին:
Այժմ ճարպիկ մարդիկ հարստացան և ապրում են բետոնակուռ պատերի մեջ: Առողջություն և նրանց: Իսկ հանրաճանաչ Դիլիմ Գարաբեղն ու Գայճ Գաբեղը մինչև օրս կարգին տուն էլ չունեն, որ դուռը կողպեն, ունեցած-չունեցածով գոհ են և ապրում են երկար, որովհետև նրանց չոփը տանող չկա, որովհետև, պարզվում է, որ ավազակները ևս ունեն արժանապատվություն, մի չոփի պատճառով աշխարհով մեկ խայտառակ չեն ուզում լինել: Կեցցե՛ն:

ՀԵՌԱՏԵՍ ԳԱՅՃ ԳԱԲԵՂԸ

Բոլոր հարևանները զարմացան, երբ Գայճ Գաբեղը մի օր սողվածքային տեղում հողամաս գնեց, որտեղ ժամանակին տուն էր կանգնած, բայց փլուզման հետևանքով շենքը ծռվել, հողն էր խրվել: Գայճ Գաբեղը գործի անցավ, հողամասը լրիվ բետոնապատեց և շտապեց ապահովագրության գրասենյակ: Ապահովագրեց բետոնակուռ ցանկապատը և թեթևացած շունչ քաշեց: Պետք է ասել, որ Գաբեղը աչքը չէր հեռացնում ցանկապատից, ամեն օր աչալուրջ և անհանգիստ հետևում էր: Ու մի օր էլ, փա՜ռք աստծո, բախտը բերեց, բետոնակուռ ցանկապատը ծռմռվեց, հողը խրվեց: Գայճ Գաբեղի ուզածն էլ դա էր, շտապեց ապահովագրական գրասենյակ: Եկան տեսան և արձանագրեցին, որ իսկապես, խեղճ մարդու չարչարանքը և ծախսած գումարը ցեխն է խրվել, որպես հատուցում ապահովագրողները մի կլոր գումար վճարեցին, որով երբեմնի աղքատ, բայց խորամանկ և հեռատես Գայճ Գաբեղը Մազլում գյուղի կենտրոնում մի շքեղ տուն գնեց:

***

Սովետի օրոք կոմունիստական կուսակցության շրջկոմների,

քաղկոմների, մարզկոմների և կենտկոմների հրահանգիչների հիմնական պարտականությունների մեջ էր մտնում պատասխանատու տարբեր միջոցառումների ժամանակ այլ-այլ աշխատողների ելույթները գրելը: Սրանք էլ, թանկագին Լեոնիդ Իլյիչ Բրեժնևի նման, տրիբունաներից պարտաճանաչորեն կարդում էին հրահանգիչների տպած, մաքրագրած, կաղապարած, մարքսիզմ-լենինիզմի գաղափարներին մինչև վերջ նվիրվածության մասին տեքստերը և արժանանում բուռն, երկարատև ծափահարությունների:

***

Գլխիս մեջ չի համակերպվում այն գաղափարը, որ բժիշկը հիվանդից ակնկալի վարձատրություն: Եթե իմանա Հիպոկրատը, ապշելուց կկենդանանա:

ԼԻՆԵԼ ՊԵԳԱՍԻՆ

Մարդ անկախ լինել չի կարող, առավել ևս՝ պետությունները: Խորհրդային Միությունում բոլոր ազգությունները մի ժողովուրդ էին: Խրուշչովը ճիշտ էր նկատում, որ երկրում ազգերը վերափոխվել են խորհրդային ժողովրդի: Ուզեցինք լինել անկախ, փախեփախ եղանք իրարից, դեմ առանք կոտրած տաշտակի, ընկանք աղքատության ու ողբերգության գիրկը: Ապա մուրացող ձեռքեր մեկնեցինք իրար:

Եղանք անկախ, ի՞նչ շահեցինք: Ուստի ապրելը միասին, նշանակում է՝ լինել Պեգասին:

ՄԻԱԿ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ամերիկայի Միացյալ Նահանգների նախկին փոխնախագահ Ալբերտ Գոռը մոլորակի գլոբալ ջերմության բարձրացման պատճառները ուսումնասիրելու համար արժանացավ Նոբելյան մրցանակի, թեև մեր ժամանակի ականոռ բնապահ Գայծ Գաբեղը չի հավակնում մրցանակի, գտել է փրկության միակ ելքը և մեծահոգաբար առաջարկում է՝ ծովերից և օվկիանոսներից ցամաք հանել բոլոր սուզանավերն ու հարյուր տոննանոց կետ ձկները:

***

Դիմեցի ավտոտեսուչին.

- Դիմացից եկող ավտոմեքենաները իրենց ցոլարձակներով կուրացնում են վարորդին, ինչո՞ւ չեք տուգանում:

- Տուգանելու համար հարկավոր է արձանագրություն կազմել:

- Է՜, կազմեցե՛ք:

- Է՛, գիտենք, որ կազմենք...

***

Ինչո՞ւ ես որոշել անպայման ամուսնանալ կույս աղջկա հետ:

- Համոզված կլինեմ, որ առաջինը ի՛մ երեխան կլինի:

- Իսկ երկրո՛րդը, երրո՛րդը...

- Աստված գիտի...

***

Ես նույնքան հուզվում եմ ուրիշի ուրախությամբ, որչափ որ՝ տխրությամբ:

***

Կինը՝ ամուսնուն.

- Մարդ շան թուլա առնելիս անգամ ցեղին է նայում:

- Միանգամայն համաձայն եմ քեզ հետ, կներես, ես միամիտ եմ եղել:

***

- Կիրկորովը այդքան տաղանդ ունի, բայց իր համար մի հարմար կին չկարողացավ գտնել, - Ֆիլիպի համերգի ժամանակ, ասաց կինը ամուսնուն:

- Նա էլ ինձ նման բախտ չունի, - հոգոցով կնոջը պատասխանեց Գայծ Գաբեղը:

***

- Աֆղանստանը ամբողջ աշխարհը սպասարկում է թմրանյութերով, մինչդեռ երկրի ղեկավար Կարզախին ինձ պես աղքատ է, - ասաց մի օր Գայծ Գաբեղը:

- Ո՞վ քեզ ասաց, - զարմացավ Դիլիմ Գարաբեղը:

- Ո՞վ պիտի ասի, չե՞ս տեսնում, ամեն օր նույն խալաթն է հագին:

ԳԱՅԾ ԳԱԲԵՂԻ ՀՈԳՍԸ

Առավոտվանից Գայծ Գաբեղը ձեռքը երեսին, հոնքերը կիտած, շրթունքները իրար սեղմած, տխուր, տրտում, քարացած նստել էր պատշգամբում, տեսնողը կարծում էր, թե աշխարհի դարդը իրեն են տվել ու չգիտի ինչ անի: Առաջինը նկատեց Դիլիմ Գարաբեղը:

- Խեր լինի, Գաբեղ, այս ի՞նչ օրի ես, ի՞նչ է պատահել, հո հիվանդ չե՞ս, - անհանգստացավ հարևանը, - ուզու՞մ ես բժիշկ կանչեմ, Վարշամը տանն է:

Գաբեղը լուռ էր:

- Տո ասա էլի, քո ցավը իմ ցավն է, էլ ո՞ր օրվա հարևաններ ենք:

- Ողջ գիշերը աչք չեմ փակել, Դիլիմ, - ծանր հոգոց հանելով, շշնջաց Գայծ Գաբեղը:

- Ի՞նչ գործի էիր, չլինի՞ самагон էիր քաշում, տանձի՞ է, ասում են՝ թթինը ավելի փափուկ է խմվում: Ախալքալաքում самагон քաշում են զարուց և բոլորովին հոտ չունի, խմում են ջրի պես:

- Չէ, Դիլիմ, իմ դարդը ուրիշ է:

- Թե Մարուսն է դավաճանել, հոգ չէ, Մարթային կբերենք, համ ջահել է, համ էլ՝ ազատ:

- Դիլիմ, թող ինձ հանգիստ մտածեմ, հետո ամեն ինչ կիմանաս:

Դիլիմը այդպես էլ Գաբեղի տխրելու պատճառը չիմացավ ու գնաց հարևաններին պատմելու:

Իսկ Գայծ Գաբեղը ողջ գիշերը շուռումուռ էր եկել անկողնում, քնահարամ արել Մարուսին:

- Այ մարդ, քունդ որ չի տանում, - դժգոհել է Մարուսը, - դուրս արի գլուխդ քարովը տուր:

- Թե իմանայիր, Մարուս, որտեղ և ում հետ եմ հիմա, ուրախությունից թև առած պար կգայիր:

Կինը ձեն չհանեց, իսկ Գայծ Գաբեղը երևակայությունից ոգևորված, հոգսերի մեջ էր:

Երևակայությունը այնքան զուռնեն էր, որ այդ գիշեր ինքը Գագարին էր, թռել էր տիեզերք և բարեհաջող վերադարձել երկիր: Ցնծում էր ամբողջ աշխարհը, վաղը զեկուցելու է Խրուշչովին, գրկախառնվելու է, իսկ թանկագին Լեոնիդ Իլյիչ Բրեժնևը փաթաթվելու է վզով ու ամուր-ամուր պաչպչելու: Պատկերացնում եմ, ժողովուրդը փողոցներն է լցվել, ծաղիկներով, դրոշներով ողջունում է ինձ: Ինձ մտցնելու են ժողովրդական պատգամավորների ցուցակի մեջ, իմ մասին իմացող-չիմացող 99,99 տոկոսով, ինչպես որ ընդունված էր Ստալինի իշխանության օրոք, իր ձայնը տալու է իմ օգտին, ո՞նց կարող եմ նստել Գերագույն խորհրդի դահլիճում և լսել երկար-բարակ ու ճոռոմ ճառերը: Մեծամեծ պաշտոնյաները պիտի սիրաշահեն, որ դառնամ իրենց փեսան, մոռանամ Մարուսին: Բա արտասահմանյան ուղևորությունները՞: Կնստեցնեն օդանավը և, հա յդա, չեն էլ հարցնի՝ կուզե՞մ Կուբա կամ Ամերիկա թռնել:

Ես որ գնամ օվկիանոսից այն կողմ, բա Մարուսը ինչպե՞ս մենակ կթի Ծաղիկ կովը, խոզերին լակ, հավերին կուտ տա, խանութից գնա արծվի կաթ բերի: Չէ, եղբայրս, ես գյուղացու զավակ եմ, տիեզերք չեմ թռչի, Դիլիմ Գարաբեղը հարևանս է, որ իմանա, կվիրավորվի...

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Մարդկային ցեղերը իրենց կենցաղում միշտ էլ օգտագործել են զանազան իրեր, ամանեղեն, զարդեր:

Եվ քանի որ աշխարհում ոչինչ մնայուն չէ, որոշ ժամանակ անց դրանք հինանում են, դառնում անօգտագործելի, մարդիկ նետում, նորերն են առնում, ավելի լավը, գեղեցիկը, հարմարը: Իսկ նորօրյա մարդիկ լարված հետաքրքրվում են նախնիների ապրելակերպով, մշակույթով, այսպիսով առաջ է գալիս հնագիտությունը:

Երկրագնդի բնակիչները այժմ էլ են հրաժարվում իրենց հնացած իրեղենից, զարդարանքներից, այն ամենից, ինչը այլևս չեն ցանկանում օգտագործել և նետում են: Կանցնի ժամանակ և այսօրվա հսկայական թափոնավայրերը հնագետների համար պեղումների արժեքավոր տեղեր կդառնան՝ Դարեր հետո ամեն մի գտած իր լույս կսփռի գալիք սերունդներին՝ մեր այսօրվա ապրելակերպի մասին: Հնագիտությունը աչալուրջ է:

***

Արտիստների կյանքը շրջապատի համար վատ օրինակ է. նրանց բազմամուսնությունը սովորական երևույթ է: Իրենց համար խաղ ու պար, լուրջ մարդկանց համար զարմանք և դարդ ու ցավ:

***

- Այդ ի՞նչ է, էկրանին կպել, ապուշավարի նայում ես: Պրեզիդե՞նտ չես տեսել, ի՞նչ է:

- Տեսել եմ, բայց զարմանում եմ, թե որտեղի՞ց իրեն այդքան գույնի ներկեր: Այսօր նորից կոստյումը ներկել է:

***

Վիլյամ Սարոյան, Արամ Խաչատրյան, Գեորգի Գարանյան, Խորեն Աբրահամյան, Ալեքսանդր Ֆարադա, Միշա Տարասով, Գևորգ Ավջյան, Ռազմիկ Մադոյան, Իշխան Ռահանյան, Վահան Քեհյան և էլի շատ ուրիշներ տաղանդավոր անձնավորություններ էին և մահացան 75 տարեկան հասակում: Ես 75-ն անցա-գնացի, ուրեմն անտաղանդ եմ, լա՞վ է, թե՞ վատ, չգիտեմ...

***

- Դուք ինձ կին կառնե՞ք, - դիմեց զեղեցկուհին:
- Կառնեմ, թե որ... աղջիկ ես, - խոստացավ տղան:

***

Դերասանները երգիչներ չեն, բայց եթե պետք է՝ կերգեն:

***

Ժողովրդական երգիչ Արամ Ասատրյանի մահից հետո նրա ստվերի տակ գտնվող որոշ երգիչներ համարձակ բեմ բարձրացան:

***

Մազլումցի Գայձ Գաբեղը Նոր տարվա շեմին հյուր գնաց Սոձայում բնակվող մանկության ընկերոջը: Դիլիմ Գարաբեղը աղեյին նստել, նայում և միաժամանակ լսում էր Սոձայի հեռուստատեսության թե առաջին և թե՛ երկրորդ ալիքը:
- Երանի՜ քեզ, Դիլիմ, որ տեղյակ ես լինում շրջապատում տեղի ունեցող բոլոր նորություններին:
- Իսկ դու չե՞ս նայում, - զարմանք հայտնեց տեղական հեռուստատեսության թունդ երկրպագու մանկության ընկեր Դիլիմ Գարաբեղը:
- Չեմ նայում:
- Ինչո՞ւ: Չլինի՞ անպատեհ նկարահանում արել, վիրավորել են քեզ և դու բոյկոտ ես հայտարարել: Գուցե պատճառը քո սկզբունքն է Սոձայի ալիքները չնայելը:
- Ոչ, Դիլիմ ջան, Մազլումը Սոձային շատ է մոտ, մի 75 կիլոմետր, հեռուստացույցը չի բռնում: Այ, եթե Սոձան լիներ Լատինական Ամերիկայում, արաբական երկրներում կամ էլ Աֆրիկայում, կբռներ ուզածդ ալիք: Երևի ես տեղափոխվեմ վերոհիշյալ երկրները և այնտեղից նայեմ Սոձայի հեռուստատեսությունը:

***

ԹՌՇԱԿ. – բարդ բառ է. կազմված է թռշնել բառի ԹՌՇ արմատից և ԱԿ - ակնաղբյուր, ԱԿ - ակունք, նույնիմաստ բառերի արմատներից: Պետությունը հեռատես է, չի սխալվել.

Մեր թռշակն այնքան է,
Որ թռշնելու աղբյուր է.
Կենդանի ես դու քանի,
Ուժ հավաքիր, համբերի:

***

Մի բազմազգ երկրում անցկացրին մարդահամար: Պարզվեց, որ հայերի թվաքանակը այդ երկրում զգալիորեն գերակշռում է բնիկ ազգաբնակչության քանակից: Մարդահամարը անմիջապես չեղյալ համարեցին:

***

Հունվարյան տոներին Դիլիմ Գարաբեղը պատրաստվեց գնալ Մոսկվա:
- Եկ միասին գնանք, - առաջարկեց Գայձ Գաբեղին:
- Մոսկվա գնալ կնշանակե խորտակվել, կյանքից զրկվել, - առարկեց Գայձ Գաբեղը:
- Ինչպե՞ս թե կնշանակե խորտակել կյանքը: Տասը միլիոնից ավելի մարդ է բնակվում մշտապես և ապրում են առոք-փառոք և չեն խորտակվում:
- Դիլիմ, քեզ մի ձևացնի միամիտ, դու հասկանում ես, թե ես ինչ եմ ակնարկում: Ես պարզապես վախենում եմ, որոշել եմ կյանքից հեռանալ միայն բնական մահով:
- Է, մեռիր, քեզ ո՞վ է խանգարողը:
- Եվ կմեռնեմ, բայց հիմա հոգիս տանող հրեշտակը չի եկել: Դու պատկերացնու՞մ ես, թե ի՞նչ է Մոսկվան: Մոսկվան օդից կախված քաղաք է, տակը դատարկություն է, մտնես մետրո, հանկարծ հսկա շենքերը գլխիդ փլվեն, փողոցով, հրապարակով գնաս, մեկել տեսար՝ փողոցը փլվեց և դու հայտնվեցիր հորի մեջ:
Այնտեղից քեզ ոչ ոք չի փրկի: Դու գնա մենակ, միայն թե սաղ-սալամ վերադարձիր, այլապես շախմատ խաղացող մրցակից չունեմ:

***

Մի ծանոթ աղջիկ մորը ներկայացրեց Գայձ Գաբեղին:
- Քեզնից ջահել է, - անծանոթ կնոջը վերուվար նայելուց հետո եզրակացրեց մեր օրերի հայտնի կնասեր Գայձ Գաբեղը:

***

Հովեկ ծանոթ մայր ու աղջիկ էին, ես էլ՝ զինեվաձառ, ուստի տեսնվում էինք օրը մի քանի անգամ: Տուն մեկնելուց առաջ մայր ու աղջիկ եկան զինետուն: Մայրը մի այնպիսի բացառիկ առաջարկ արեց, որ մինչև օրս զարմանքս ու միտքս այդ առաջարկի ոլորտների մեջ դինջանալու տեղ չի գտնում: Փաստորեն անկեղծ և բարի նպատակով ասաց.
- Եթե դու ձրի տաս մեզ մի շիշ գինի, մենք տանը կխմենք և կհիշենք քեզ:
Ա յ, խելոք գաղափար: Ամեն կին չէ, որ կարող է այդպես հոգատար և խելոք հոգ տանել մի դժբախտ գինեվաձառի անմահության համար: Իսկ ես, ապուշս, բոխ գտնվեցի, մինչև հիմա երանի կտային և կհիշեին ինձ:

***

Հայաստանը անկախ դառնալուց հետո սկսվեց երկրից հայերի մեծ փախեփախը հատկապես Ռուսաստան: Այժմ ռուսական կայսրության տարածքում սունկերի նման հայկական գաղթօջախներ են առաջացել և հայերը այժմ ավելի են սիրում Հայաստանհայրենիքը, քան երբեք: Բանաստեղծ Գևորգ Էմինը երևի այսօրը նկատի ուներ, որ ժամանակին գրեց. «Ես այնպե՛ս եմ ելնում իմ տնից, կարծես թե մտնում եմ ի՛մ տունը»:

***

Ասված է՝ դասախոսին պատժելու համար հարկավոր է ձայնագրել նրա դասախոսությունը և լսել տալ իրեն: Նույնը կարելի է ասել արդի էստրադային երգիչների կոչվածներից շատերի մասին: Նշանակություն չունի կի՞ն է, թե՞ տղամարդ: Հետաքրքիր է, նրանք իրենց անտեղի ճվճվոցների, ծռմռոցների, չափռստոցների, թռչկոտոցների և գազանավարի բղավոցների տեսագրությունները, եթե տեսել են, ապա ի՞նչ հաճույք են ստացել: Չլինի՞ թե անչափ, լաց լինելու աստիճան հուզվել են:

***

Հյուրը, որ աղքատի տանը հաց ուտի, տանտերը պատիվ կհամարի իր համար, իսկ հարուստ մարդը հյուրի կերածը՝ փսաս:

***

Ամրագոտին վարորդին նրա համար է, որպեսզի ավտովթարից հետո չկարողանա փախչել դեպքի վայրից:

***

Մի աղջկա, որին համակրում էի, նվեր տարա մի տուփ շոկոլադ: Նայեց աչքերիս և ասաց.
- Պետք չի:
Զգացի, որ փոխադարձ համակրանք չկա, մեկուսի հարցրի.
- Ե՞ս, թե՞ տուփը...

***

Երբ սկսվեց զորբաչովյան վերակառուցումը, առանձին ձեռներեցներ վերակառուցման լուսարձակի շլացուցիչ շողերից ոգևորված, հավեսով ձեռք բերեցին մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ, բայց ձեռներեցների թափը իսկույն մեղմացավ, երբ պարտադրեցին, որ սեփական մեքենաները գիշերները պետք է կանգնեն զարաժներում, նշանակություն չունի՝ դու քաղաքու՞մ ես բնակվում, թե՞ գյուղում, այդ զարաժին հարևանությա՞մբ ես բնակվում, թե՞ հինգ կիլոմետր հեռու: Սեփականատերը պարտավոր էր զարաժի ղեկավարության հետ պայմանագիր կնքել և վճարել նաև գիշերավարձ: Վերակառուցումը տեղավազք կատարեց: Լավ է, որ շուտով խելքի եկան և հրաժարվեցին նման անհեթեթությունից:

***

Գայձ Գաբեղը խանութ բացել, բան էր ծախում, իսկ քորփա Դիլիմ Գարաբեղը մոտը, զլուխը կախ, գործակատար էր աշխատում: Օրերից մի օր Գայձ Գաբեղը նկատեց, որ գործակատարը օրը ամենաքիչը երեք կիլոգրամ պաղպաղակ է ուտում և ժամաժամ չաղանում:
- Եթե դու փորիդ խաթեր ամեն օր այդքան պաղպաղակ ես ուտում, բա չե՞ս մտածում, թե հաճախորդներին ինչ են վաճառելու, - նկատեց խանութպան Գայձ Գաբեղը:
Դիլիմ Գարաբեղը լուռ, ոտը՝ ոտին քսելով, լսում էր: Հետո նա այնպիսի՝ փաստարկ գտավ, որ Գայձ Գաբեղը քիչ էր մնում ներողություն խնդրի գործակատարից, որովհետև ինքը երբեք չէր մտածել այդ մասին:
Դիլիմն ասաց.
- Բա ինչ անեմ, պաղպաղակը շատ քաղցր է և ինչքան ուզես՝ ուտվում է, կշտանալ չի լինի:

***

Աշխարհի կարգը և մարդու բնությունը միանշանակ չէ: Մշտական ոչինչ չկա կյանքում: Եվ հոգուն է հատուկ և սրտին ներողամիտ լինելը, որը տանում է կողմերի հաշտության:
Թշնամին կատաղի հարձակում գործեց մեր երկրի վրա, միլիոնավոր զոհերի գնով հաղթեցինք: Ժամանակը ներողամիտ եղավ և հաղ-

թող կողմի որդիներից, ծոռներից ոմանք հաղթվող երկիրը իրենց համար համարեցին դրախտավայր, ապա մշտական բնակություն հաստատեցին այնտեղ:

***

Գայճ Գաբեղը երկհարկանի բարեկարգ տուն ուներ, իսկ տնից քիչ հեռու՝ նաև հարմարավետ զարաժ: Մի օր էլ զարաժի վրա լուսավոր տնակ կառուցեց, որը Դիլիմ Գարաբեղին զարմանք պատճառեց, նա չհամբերեց և հարցրեց.

- Գայճ Գաբեղ, տունդ այնքան մեծ է, որ չգիտես ո՞ր սենյակում Վարդուշիդ փաթաթվես ու քնես, իսկ այդ տնակդ ինչի՞դ է պետք:

Գայճ Գաբեղը ավելի զարմացած նայեց Դիլիմի միամիտ աչքերին և ասաց.

- Համշենցին ի՞նչ է ասում, Դիլիմ Գարաբեղ, ասում է՝ ավելորդ մալը աչք չի ծակի: Բա դու չե՞ս ֆայմում, որ ամռան ամիսներին, ինչպես թաղի բոլոր մարդիկ, տունս կլցնեմ հովկեներով, փող կվաստակենք, իսկ ես ու Վարդուշը կանցնենք այդ տնակը:

Դիլիմ Գարաբեղը աչքով անցկացրեց թաղի բոլոր հարևանների տները և ամենքի զարաժների վրա մեկ կամ երկհարկանի տնակներ տեսավ: Հիշեց վերջին կնոջ Սրբուկի ամենօրյա փնթփնթոցը իր գլխին, որ ինքը ևս չի ֆայմում իր զարաժի վրա մի տնակ դնել:

***

Այնպես պատահեց, որ Դիլիմը Սուխումում տունը ծախեց և նոր տուն գնեց Պրիմորսկ գյուղում: Տունը թաղված էր մանդարինի այգիների մեջ, բայց Դիլիմը ո՞ր օրվա գյուղացին էր, որ այգեգործությամբ զբաղվեր, մանդարինը տանջանքով հավաքեր և հանձներ ընդունման կետ: Պարզապես ճակատագրական սխալ էր արել և հոգեկան խանգարման աստիճանի մտահոգված էր մտավորական մարդը: Դա զգաց Գայճ Գաբեղը և իրեն հատուկ խորամանկությամբ զգուշորեն ակնարկեց.

- Բախտավոր մարդ ես, Դիլիմ, ապրում ես գյուղում, քաղաքի փոշուց, աղմուկից հեռու, ամբողջ օրը մշտականաչ այգու մեջ մաքուր օդ ես շնչում, կյանքդ երկարացնում:

Դիլիմը Գայճ Գաբեղի թաքնված հեգնանքը չզգաց, դարձավ իրեն և ասաց.

- Ամեն առավոտ, Գայճ Գաբեղ, դառնում եմ դեպի արևը և աստծուն աղաչում, որ փրկի ինձ գյուղի այս ամայի վայրից, արյունս պղտորվել է և այլևս գյուղում ճաալ չեմ կարող:

Ամիսներ անց Դիլիմին հաջողվել էր տունը գյուղում ծախել և կրկին վերադառնալ Սուխում:

***

Եթե կինոնկարը ցուցադրելիս հինգ րոպեն մեկ գովազդ հաղորդվի, ապա կշահի և կինոֆիլմը, և գովազդը, իսկ հեռուստադիտողը կստանա կրկնակի բավականություն:

***

Ժողովրդավարություն էլ սովորեցինք. խոսքի ազատություն է և շատ համով բան է, կարող ես «ուտել», թե՛ ցերեկը և թե՛ գիշերը: Եվ հեշտ էլ մարսվում է: Կարող ես մեկին հայհոյել, բամբասել, հավատա, որ այդ մեկը իրավունք չունի արդարանալու համար խոսք ասելու կամ վիրավորվելու, խոսքի ազատություն է: Իսկ եթե նա էլ քեզ վիրավորի, դու էլ իրավունք չունես հակառակվելու: Երկուսիդ իրավունքներն էլ հավասարազոր են: Մինչև հիմա, հետաքրքիր է, ինչո՞ւ էր թաքնված խոսքի ազատության քաղցր բլիթը: Թե որ մարդու առաջացման օրից լիներ, մեր վայրենի նախնիները միմյանց վրա քարեր չէին շպրտի, երկու դար առաջ հակառակորդ կողմերը մուշկետները չէին ուղղի իրար դեմ, արիմիության ժողովներում, պետական Դումաներում միմյանց օձիքից չէին քաշքշի:

Փա՛ռք աստծո, մարդկության պատմությունը հասավ իր նպատակին: Ֆրանսիայի Սենատը քրեականացրեց հայոց ցեղասպանության ժխտումը, սակայն թուրքական ոհմակը աղաղակեց. դա խոսքի ազատության բռնացում է: Ուչինչ, թուրքերը ևս հասկացել են խոսքի ազատության զորությունը և զոռ են տալիս իրենց մերկ ուղեղներին:

***

Դատարանները անկախ են իշխանություններից, բայց օլիգարխներից՝ հազիվ թե:

***

Կենսաթոշակի հերթական ավելացումը տոկոսային հարաբերությամբ այնքան ողորմելի էր, որ կառավարությունը ամաչեց նախօրոք հայտարարել այդ մասին:

ՀԻՇԱՐԺԱՆ ՕՐ

Ընտրական տեղամասում մի կին ներկաներին տարօրինակ հայտարարություն արեց.

- Ես ուզում եմ, որ իմ կյանքում տոնական և հիշարժան օր լինի այսօր:

Գայճ Գաբեղը լս լսեց և քմծիծաղեց.

- Ընկերուհի, չե՞ս տեսնում, որ ընտրությունը ինքնին կատարյալ շոու է, դու էլ ուրախացիր և հիշիր ամբողջ կյանքում:

Հենց տեղում, մասնավոր զրույցի ժամանակ, կինը ասաց, որ ինքը դեպուտատության թեկնածուին դեմ է քվեարկել: Վերջում պարզվեց, որ ընտրողները հարյուր տոկոսով քվեարկել են թեկնածուի օգտին: Կինը իսկապես որ զարմացավ և այդ օրը հիշարժան մնաց նրա կյանքում:

***

- Գայճ Գաբեղ. չլինի՞ արձակուրդդ որոշել ես Սոճայում անցկացնել:

- Ոչ, ի՞նչ ես ասում, իմ ունեցած փողով կարող եմ հանգիստս անցկացնել միայն արտասահմանում: Ռուսաստանում միայն օլիգարխները կարող են հանգստանալ, եթե, իհարկե, իրենց արժանապատվությունից ցածր չհամարեն:

***

Լյուդվիգ Քյույյանն ասաց, որ աբխազահայ գրական միավորման մասին ակնարկում չեմ հիշել քերթող Երվանդ Ղանդիլյանին: Պարզապես իմ անուշադիր լինելուց է ստացվել երկի: Բայց այն էլ ասեմ, որ Երվանդ Ղանդիլյանը առաջ մրող էր, իսկ հիմա՝ գրող է, ոտանավորների ժողովածու ունի: Նա իմ գրական հերոսն է և կների ինձ:

ՀԱՎԱՆԱԿԱՆ ՀԻՊՈԹԵԶ

Արեգակը երկնքի անհուն տարածքում հրե թեժ օջախ է, երբ ծածկում են մոխիրով (թե ովքե՞ր, չգիտեմ), գիշերն է գալիս, իսկ երբ մոխիրը հետ են անում, լուսանում է և երկիրը տաքացնում: Արեգակի վրա նկատվող բծերը փայտի կիսայրված խանձակոթեր են:

ԴԵ Ե՛Լ ՈՒ ՀԱՎԱՏԱ

Վրաստանի Վերին Լարս լեռնանցքում առատ ձնաբուքի պատճառով ճանապարհը փակ է, բեռնատար և մարդատար մեքենաները օրերով սպասում են եղանակը բացվելուն, չնայած դրան, «Շանթ» հեռուստաալիքի վազող տողը օրը տասնյակ անգամ քաղաքացիներին բարձրակարգ ավտոբուսներով ուղևորության է հրավիրում Երևանից Տուապսե-Սոչի-Սալսկ-Ռոստով-Կրասնոդար-Մինվոդի-Պյատիգորսկ-Կիսլովոդսկ և Ռուսաստանի այլ քաղաքներ, ապա բերել նորից հասցնել Երևան: Չլինի՞ թե ավտոբուսները թևեր ունեն և չարաբաստիկ լեռնանցքի վրայով օդանավերի նման թռչելու են:

Դե ե՛լ ու հավատա վազող տողի զորությանը, վարդապետ:

***

Վրաստանում որքան ավելացավ կանաչ թեյատերևի բերքատվությունը, նույնքան էլ ընկավ նրա որակը: Մի անգամ վրացական արտադրության թեյ գնողը երկրորդ անգամ չէր ցանկանում: Իշխանությունները տագնապ բարձրացրին և կազմակերպեցին զուգահեղի թեյահավաք, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս Թամարա Ղուփունիայի նամակը ուղղված հանրապետության բոլոր թեյաբույծներին. որը վերնագրված էր. «Վերականգնենք վրացական թեյի նախկին փառքը»: Թեյաբուծության փարոսի նամակը տպագրեցին Վրաստանի բոլոր թերթերը և սկսվեց արձագանքների հեղեղը: Իհարկե, դրանից ոչինչ չփոխվեց, որովհետև չուզեցին 85 տոկոսով կրճատել թեյատերևի բերքահավաքի պլանը, քանի որ Վրաստանը գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերած հաջողությունների համար հավակնություն ուներ հերթական անգամ նվաճելու Համամիութենական Սոցիալիստական մրցության փոխանցիկ դրոշը:

***

Դիլիմ Գարաբեղը գնաց առողջարան: Թարսի պես ոչ մի ծանոթ չկար, որ հետը մի քաղցր խոսք փոխանակի, ջան ասի, ջան լսի: Եվ սաստիկ տխրեց:

- Դիլիմ, ո՞նց ես, օրդ ինչպե՞ս է անցնում, հո չե՞ս ձանձրանում: Երևի ջահել սիրուհի ճարեցիր, Մազլում գալուց մեկն էլ ինձ համար կբերես, - բջջային հեռախոսը ականջին, հետաքրքրվեց Գայճ Գաբեղը:

- Հիմար վիճակում եմ, - հետևեց Դիլիմ Գարաբեղի հոգոցով պատասխանը:

- Հը, ի՞նչը դուր չի եկել:

- Տո մի ծանոթ արարած չկա, որ հետը նստես, մի երրորդ ընդհանուր ծանոթի մեջտեղ առնես, մի լա վ բամբասես, ժամանակ անցնի, սիրտդ հովանա:

***

Ամուսինը պառկեց կնոջ անկողնում և ցնցվեց: Կնոջ մարմինը այնքան սառն էր, ասես հյուսիսային բևեռից բերած մի սառցակտոր լիներ, ինքն էլ սառեց: Էլ ամուսնական պարտականության մասին մտածել չ կլիներ: Երբ վերջապես տաքացավ, լուսացել էր, ստիպված շտապեց աշխատանքից չուշանալ:

***

Հնդկաստանի վարչապետ Ջավահառլալ Ներուն պաշտոնական այցով գտնվում էր Վրաստանում: Վրաստանի կառավարությունը, ինչպես միշտ, հյուրին զարմացնելու նպատակով ճոխ կերուխում էր պատրաստել և սեղանին դրել մի խոշոր տապակած քարայծ: Ներուն մտավ դահլիճ և, քանի որ կյանքում միս չէր կերել, տապակած քարայծը որ տեսավ, շուռ եկավ ու գնաց դահլիճից:

***

Ռուսաստանի կառավարությունը, չնայած ուշացումով, բայց հոգաց Հայրենական պատերազմի մասնակիցների մասին՝ տալով նրանց բարձր կենսաթոշակ և բնակարան: Թող երկար ապրեն և առոք-փառոք վայելեն, արժանի են: Իսկ միլիոնների ծնողները, որ զոհվեցին, կյանքը տվեցին Հայրենիքի փրկության համար, նրանց որբացած զավակները մխիթարանքի անգամ չարժանացան:

***

- Գայձ Գաբեղ, ինչպե՞ս ես վարվում կենսաթոշակիդ հետ, երբ ստանում ես:

- Մանր-մունր գնումներ եմ անում, որպեսզի հաջողացնեմ ամբողջ գումարը լրիվ ծախսել:

- Ինչո՞ւ լրիվ:

- Որպեսզի մինչև գալոդ ամսվա թոշակի օրը կրկին դնելու տեղ ունենամ:

***

Հիվանդը դուրս է գրվում հիվանդանոցից:

- Մե՞նք լրիվ բուժեցինք ձեր հիվանդությունը, - ասում է բժիշկը:

- Ճի՞շտ, ուրեմն ինձանից երջանիկ մարդ չկա աշխարհում:

- Ի՞նչ նկատի ունեք, - զարմանում է բժիշկը:

- Այն, որ այսուհետև հաստատ համոզված կլինեմ, որ առողջ կմեռնեմ, թե չէ հիվանդ հանգուցյալը ու՞մ է պետք հանդերձյալ աշխարհում:

«ՎԱՐԴԱՆԸ ՄԵՂԱՎՈՐ ՉԷ»

Վարդուշը բողոքեց հորը.

- Վարդանը ամեն օր հարբած տուն է գալիս, հոգնեցի արդեն:

- Լավ, դու հանգիստ կաց, հասկացող մարդ է, ես հետը կխոսեմ, կիմանամ պատճառը, - խոստացավ հայրը:

Հաջորդ օրը Աղվանը գնաց Վարդանի աշխատավայր, որտեղ փեսան գազամատակարարման հիմնարկի տնօրենն էր: Բարևեց փեսային և նստեց՝ ամբարելով գլխում հրարամերժ հարց ու պատասխան: Ծանր նստել ու մտածում է՝ ինչպե՞ս սկսի խոսքը, որպեսզի փեսան խելքի գա, վերջ տա խմելուն:

Այդ մտածումների մեջ էր, երբ մեկ էլ գրասենյակի դուռը լայն բացվեց, մի ուրախ մեզրել, ճաշակով հագնված, պատկառելի արտաքինով, թափով ներս մտավ և սեղանին դրեց ցելոֆանե տոպրակը, միջից հանեց ախորժակ գրգռող մի խոշոր վարդագույն տապակած հավ, այլ ուտեստներ և մի շիշ հայկական կոնյակ: Լցրեց փոքրիկ բաժակները, Վարդանի աներոջը ևս հրավիրեց միանալ իրենց: Մթնոլորտը այնքան անմիջական էր, տրամադրող ու մտերմիկ, իսկ սեղանին բուրում էր տապակած հավը, որ Աղվանն էլ իր հերթին բաժակ բարձրացրեց և քաղցր կենացներ ասաց փեսային:

- Վարդանը մեղավոր չէ, - բարձր տրամադրությամբ վերադառնալով տուն, աղջկանը ասաց Աղվանը:

Սիրավան ՍԵՎՈՒՆԻ

ԵՐԳԻԾԱԿԱՆ ՔԱՌՅԱԿՆԵՐ

ԵՍ մարդ էի փեշակով,
Հագնում էի ճաշակով,
Հիմ:ա եկա ծերացա,
Էլ ո՞նց ապրեմ թոշակով:

Խրուշչովը ճառաբան
Մեզ՝ խոստացավ հազար բան,
Դարակները խանութում
Դարձրեց հացի քարտարան:

Բրեժնևը միշտ բարի,
Ծամոն ուներ բերանում,
Եվ որսորդ էր քաջարի
Ընկերներով մեծանուն:

Արժանացավ փառք ու պատվի
Բրեժնևը մեզանում,
Ուստի կուրծքն էր ամեն տարի
Մեդալներով զարդարում:

Գորբաչովը զիլ ճառեց,
Որպես քամի, վառ փարոս,
Ուստի արին գահրնկեց,
Երբ որ գնաց նա Ֆարոս:

Գորբաչոֆս էր օդից խոսում
Եվ ասածը վերվար մանում,
Չէր հասկացվում ինչ է ասում,
Լսողին էր զահլա տանում:

Գորբաչովը բարբառեց,
Հինը նորով փոխփոխեց,
Եւ դուրս եկավ, ինչ որ կար,
Պետք էր անդարձ կոխկրտել:

Մարդ էր տկար, ձի նստեց,
Դարձավ երկրի ղեկավար,
Ձին էլ ելավ քացի տվեց,
Խեղճը ընկավ դողահար:

Մի հիվանդի տկար, անզոր,
Պաշտոն տվին փառավոր,
Շրջապատը նրա հզոր
Պտտվում էր շուրջբոլոր:

Տասը ոչխար, երկու՝ կով,
Հոգուդ մեռնեմ, Մալենկով,
Գահին երկար մնայիր,
Մեզ հարուստ կյանք կտայիր:

Անդրոպովը ղեկավար
Չխնայեց ծույլերին,
Թե որ ապրեր նա երկար,
Գործ կճարեր ամենքին:

Հավաքվել էր ծերակույտ
Քաղբյուրոյում մեր երկրի,
Մահը դաժան և անփույթ
Խլեց-տարավ հերթ-հերթի:

Խցանումը Սոճայի
Հազիվ մի օր վերանա,
Շքախումբը Պուտինի
Քանի հաճախ կերևա:

Բեխավորին անարժան
Գովքը երկինք հանեցին,
Ով որ փառքի էր արժան,
Նրան պատժեց շատ դաժան:

Ախ, Հայաստան, Հայաստան,
Դու իմ հոգու բուրաստան,
Վիզադ հանիր դե՛ն գցիր,
Որ չմնաս հեռաստան:

Ասաց՝ պե՛տք է, պե՛տք է, պե՛տք է,
Բացթողումը հնի հետք է,
Անցան տարիք, մնաց նույնը,
Նորն էլ ասաց՝ պե՛տք է, պե՛տք է:

Եկան կոնակ-կոնակի
Մեր այրերը միշտ արի,
Որ երրորդը իր օրում,
Երբեք մեջտեղ չմտնի:

Ծառայողն էր միտք անում՝
Ջուր չէ ունի մեծ գրպան,
Եւ չի կերել իր օրում
Կաշառքից էլ քաղցր բան:

Հայաստանը լքում են,
Իրենց պատվին թքում են,
Օտար ափեր գնալով,
Մյուսներին ձգում են:

Այնքա՛ն հիմա ցրվեցինք
Եւ բիզնեսով տարվեցինք,
Մե՞ր թոռներին երբ տեսանք,
Ու՞մ տղան ես, հարցրեցինք:

Մենք չենք մնա անոթի,
Կապրենք լոթի և փոթի,
Քանի թուրքը կբերի
Բանջար, վարունգ ու լոբի:

ԱՊՐԻԼԻ 1-Ը ԵՐԳԻԾԱՆՔԻ ԵՎ ՀՈՒՄՈՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐՆ Է

Ապրիլի 1-ը երգիծանքի եւ հումորի համաշխարհային օրն է: Ժողովուրդն ասում է՝ ծիծաղի ու միմյանց անմեղ ստերով խաբելու օրը: Հումորն ու ծիծաղն այն հզոր ուժն են, որի շնորհիվ մի պահ կարող ենք կտրվել հոգսաշատ առօրյայից եւ կյանքի շատ դժվարությունների նայել ավելի թեթեւ: Կորած է այն օրը, որի ընթացքում դու ոչ մի անգամ չես ծիծաղել: Փորձենք մեր ամեն օրը լցնել ծիծաղով ու փոխադարձ ժպիտներով:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ. «ԺՊԻՏՆԵՐ ԱՆԺՊԻՏ ՏԵՂԵՐԻՑ»

Ծիծաղը փրկարար օղակ է կյանքի փոթորկոտ ծովում: Լավ է այն կատակը, երբ լրջություն կա տակը: Վերջերս դեպքերի բերումով ընկա մի լուրջ տեղ և ուզում եմ մի քանի ժպիտ վերհիշել:

Առավոտյան շատ վատ զգացի: Շտապօգնություն կանչեցինք: Բժիշկը մի հաճելի երիտասարդ էր՝ Կարեն Խաչատրյան անունով: Ասացի. «Քեզ տեսնելիս, Կարեն, կանայք պիտի պարեն»: Նա իսկույն կատակով պատասխանեց. «Թող որ ինձ տեսնելիս դու պարես, Արամայիս»: Զգացի, որ այդ մի կատակով նա ինձ ավելի բուժեց:

Ինձ տեղափոխեցին 1-ին հիվանդանոց: Հիվանդը ես էի, բայց շուրջբոլորս հազում, փռշտում էին թե՛ հիվանդները, թե՛ բժիշկները: Պրոֆեսոր Իրինա Մալխասյանի հետ զրույցի ժամանակ պարզեցի, որ մի քանի օր առաջ ինքն էլ էր հիվանդ եղել: Կատակեցի՝ ինձ նկատի ունենալով. «Բա ինչո՞ւ եք առողջ մարդուն բուժում»:

Բժիշկը քննեց ինձ, տիկինս հարցրեց. «Ինչո՞վ կուրախացնեք»: «Թոքաբորբով»: Այսինքն լավ էինք պրծել, կարող էր ավելի վատ լինել:

Մի ծերուկի՝ Սահակ Արամյանին, բուժքույր Մարինեն զննեց ու ոգեւորված բացականչեց. «Պապիկ, ուրախացե՛ք, ո՛չ ջերմություն ունեք, ո՛չ ճնշում, ո՛չ էլ շաքար»:

– Է՜, բալա ջան, իբր ինչ ունեմ, որ դրանք էլ ունենամ:

***

Էջմիածնի շրջանում ապրող մայրապետ Նեկտար Պողոսյանը գորովանքով էր խոսում իր այգու մասին. «Հենց գալիս եմ հիվանդանոց, ծառերն են ինձ կարոտում, հենց գյուղ եմ գնում՝ հիվանդները»:

Ամեն շնչող էակ՝ լինի մարդ թե ծառ, խնամքի, հոգատարության կարիք ունի: Ծիծաղը, երգիծանքը հարկավոր են մարդկանց միշտ դալար, առողջ պահելու համար: Նույնիսկ հիվանդանոցում հումորը բուժիչ է:

Հարգանքներով իսկական՝ Արամայիս Սահակյան

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ. «ԿԱՏԱԿ, ՈՐ ԾԻԾԱՂԵՑՐԵՑ ԱՄԵՆԱԽԻՍՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԻՆ»

Մեր դպրոցում ապրիլի 1-ին միշտ այսպիսի մի կատակ էինք անում. գրատախտակի կավիճը վերցնում էինք, տեղը դնում շաքար՝ լավ մշակված կավճի նման: Ուսուցիչը վերցնում էր, փորձում գրել, իհարկե բան չէր ստացվում, մենք էլ մեռնում էինք ծիծաղից:

Փորձված ուսուցիչներն այդ օրը գալիս էին իրենց «սեփական» կավիճներով: Այդպիսին էր մեր թվաբանության ուսուցչուհի ընկեր Հովհաննիսյանը, բայց այդ օրը նա իր կավիճը չէր բերել. կամ ծանր հոգսերի պատճառով (դե գիտեք, սովետական մանկավարժի կյանքն էլ կյանք չէր), կամ էլ վստահ էր, որ նման կատակ իր հետ չենք համարձակվի անել. մենք վախենում էինք նրանից: Ավաղ, մարդս սխալական է: Մենք հանդգնել էինք... Նա այդ օրն արդեն անտրամադիր մտավ դասարան, ծանր, դանդաղ քայլվածքով մոտեցավ գրատախտակին: Դասարանը քարացավ: Մտքերի տակ կքած վերցրեց շաքար-կավիճը ու շատ արագ գլխի ընկավ, թե ինչն ինչոց է: Պողպատե հայացքը դանդաղ ուղղեց դեպի քար կտրած դասարանը: Նրա ահարկու հայացքը սահում էր աշակերտից աշակերտ: Մենք քարացել էինք, ճանճերն անգամ վախից չէին տզզում, որ գոնե մի ձայն լսվեր: Ժամանակը կանգ էր առել: Ամեն ինչ պարզ էր. կատակը չէր ստացվել, եւ երկաթյա տիկինը փնտրում էր զոհին: Հայացքը հասավ ինձ և կանգ առավ (ես նրա եղբորորդու՝ մեր դասարանի Աբրահամ Տեր-Հովհաննիսյանի ամենամոտ ընկերն էի): Ջոկոնդայի խորհրդավոր ժպիտը շողաց նրա դեմքին. «Եվ դո՞ւ, Բրուտոս»: Դե ես էլ, անկախ ինձնից, ժպտացի մեղավոր ժպիտով՝ Կոզլևիչի պես: Հանկարծ ուժեղ ցավ զգացի, ու աչքերիցս կայծեր դուրս թռան: Դասարանը պայթեց ծիծաղից: Ամեն ինչ այնքան արագ տեղի ունեցավ, որ ես բան չհասկացա: Չհասկացա, թե ինչպես ուսուցչուհին ավստրալիացի բումերանգ նետողի վարպետությամբ շաքար-կավիճը շպրտեց իմ կողմը: Կավիճը, Սասունցի Դավթի Թուր Կեծակու պես, կտրեց-անցավ աշակերտների շարքերն ու կպավ ուղիղ ճակատիս: Հարվածն այնքան ուժեղ էր, որ կավիճը հետ թռավ ու ամբողջ ուժով զարկելով գրատախտակին՝ երկու կես եղավ: Տեսարանն այնքան տպավորիչ էր, որ դասարանը մեռնում էր ծիծաղից: Ծիծաղում էր նաև ընկեր Հովհաննիսյանը: Ծիծաղեցի նաև ես: Ես իսկապես երջանիկ էի, որովհետեւ կարողացել էի ծիծաղեցնել մի սովետական մանկավարժի, մեր ամբողջ դասարանն ու հատկապես իմ կողքին նստող Չապկինյան Ռիտային... Ի՞նչ անենք, որ շաքար-կավիճը ես չէի բերել, ի՞նչ անենք, որ գլուխս ցավում էր: Կարևորը՝ բոլորս ծիծաղեցինք ու իրար ավելի սիրեցինք:

Մինչ օրս էլ այդպես ապրող, ձեզ շատ սիրող Վարդան Պետրոսյան

ԴԱՎԻԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ. «ԼՈՒՍԱՁՈՐՑԻ ՄՈՒՔԻՆ ԿԱՏԱԿՈՒՄ Է»

Երկար տարիներ աշխատելով որպես Արցախի «Պըլը Պուղի» երգիծական ամսագրի խմբագիր՝ գրի եմ առել արցախցիների հումորով շաղախված սրամիտ մտքերն ու զրույցները: Սիրով ներկայացնում եմ արցախյան երգիծապատում «Լուսաձորցի Մուքին կատակում է» շարքից:

Ճանճերը նեղում են…

Օգոստոսյան մի տոթ օր Մուքու չափազանց նիհար, վատառողջ կինը խոհանոցում ճաշ պատրաստելիս շարունակ տրտնջում էր, որ շոգին չի դիմանում՝ հերիք չէ, մի կողմից էլ ճանճերն են նեղում:

– Չես պատկերացնում, Մուքի, թե ոնց են խայթում, – ոսկրոտ, թույլ ձեռքերը դժվարությամբ տարածելով՝ դժգոհում է նա, – ախր միսս կերան:

– Ախր մեկը հարցնի՝ վրեդ ի՞նչ կա, որ դարդ ես անում, կնիկ: Գոնե մի փափուկ տեղ լիներ՝ կսմթեի… Ճանճերը ոսկորներդ հո չե՞ն ուտելու:

Ներկայացրեց Լիլիթ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

Հայկական պոեզիան խելք է խրատում.

Հեյ ագահ մարդ, հեյ անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ,
Քանի քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ,
Ի՞նչ են տարել նրանք կյանքից, թե ինչ տանես դու քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփան:

Հովհաննես Թումանյան

Մեծերը երբեք չեն սխալվում՝ ամենամեծ հարստությունը ագահության բացակայությունն է:

Մնում է միայն իմանալ դյուրամարս, ամենօրյա բաղադրատոմս

Վերցնում ենք օրը և նրան լավ մաքրում նախանձից, ատելությունից, վշտից, ագահությունից, համառությունից, եսասիրությունից, անտարբերությունից:

Ավելացնում ենք երեք լիքը գդալ լավատեսություն, մի մեծ բուռ հավատ, փոքրիկ գդալով համբերություն, մի քանի հատիկ հանդուրժողականություն և փոքրիկ տաշեղ բարեհամբյուրություն ու ազնվություն բոլորի նկատմամբ:

Ստացված ամբողջ խառնուրդի վրա վերևից լցնում-պատում ենք սիրով:

Հիմա, երբ կերակուրը պատրաստ է, զարդարում ենք բարության և ուշադրության ծաղիկների թերթիկներով:

Մատուցվում է ամեն օր, ջերմ խոսքերի և սիրալիր ծիծաղի գառնիրով:

Համբերություն ու լավատեսություն բոլորիս:

➲17



Կարեն ՄՂԴՍՅԱՆ

***

Դու հին ես՝ այո, բայց ոչ հնացած,
Դու քարի երկիր ու ոչ քարացած,
Մեր խելառ կամքն է լեռներիդ տեսքով այդպես քարացել,
Ալեհեր լեռդ՝ այս մեր վշտից է միջուկից ճեղքվել:
Ջրերդ կարկաչ՝ մեր արցունքներն են հատ-հատ գումարված,
Երկինքդ կապույտ՝ այդ մեր հավատի անհունն է անտակ,
Դաշտերդ կանաչ՝ մեր երազների հորիզոններն են,
Ձորերդ խորունկ՝ բարությամբ լցված հոգուդ ճեղքերն են:
Քո ծաղիկները՝ քո հերոսների քարավաններն են,
Երկաթ գրերդ՝ մեր օջախների անխախտ սյուներն են...

Դու հին ես՝ այո, բայց ոչ հնացած,
Դու քարի երկիր ու ոչ քարացած,
Մեր արևատես, մեր արևահամ,
Մեր հանճարածին երկիր Նաիրյան:

***

Սարից փախած քամի, խնձորենու բուրմունք,
Եվ զարկերակ մի խենթ ու տաք մի պարանոց,
Ինչ-որ թեթև տագնապ, աչքից կախված արցունք,
Երկու կարոտ շուրթեր, երկու սրտի հևոց:

Հետո... ասես օդն էլ հանկարծ ուշաթափվեց,
Վերևից աստղերն էին խանդով նայում,
Գլխապտույտ եղավ, շունչը մեկեն հատվեց,
Գրկախառնումի ծոցում սերն էր անուշ բուրում:

Իրար գրկած այդպես գալարվում էր մի սեր,
Թավալվում էր ծաղկած խնձորենու այգում,
Երկնից կախվել էին խանդով լցված աստղեր,
Սիրո դող կար այգում, այգում սերն էր հաղթում:

***

Կարոտել եմ ձեզ, իմ Լոռվա սարեր,
Երկրի ու երկնի կապույտ դաշնություն,
Ժայռերին թառած վանքեր ու բերդեր,
Դարերից եկող հավիտենություն:

Կիրճեր վիհավոր ու խորհրդավոր,
Լեռներ՝ վերացած կապույտ երկնքում,
Ես՝ մասնիկը ձեր մի վաղանցավոր,
Իմ մանկությունն եմ թողել ձեր ծոցում:

Դարերի դավից ցնորված Դեբեդ,
Կարոտել եմ քեզ, քո ցայտ ու հևքին,
Լոռվա բնաշխարհի իմ բազմագմբեթ,
Փարվեի հավետ ես քո փեշերին:

Քո հովիտներում, կանաչ դաշտերում,
Որքան եմ շրջել, ճամփաներ չափել,
Եվ հիմա այստեղ՝ իմ տխուր հեռվում
Փորձում եմ կարոտս հուշերից առնել:

Կարոտել եմ ձեզ, իմ Լոռվա ձորեր,
Նախաստեղծման շունչ-հոտով լցված,
Ա՜խ, որքան էի խենթ ու անտարբեր,
Իմ Լոռվա աշխարհի մարգարեացած:

Իմ հայոց լեզուն

Դու աղն ես մեր կենաց,
Հացն ես մեր հոգու,
Դարերով պահած ու շահած
Կեցության խորհուրդն ես մեր դու:
Մեր խիղճն ես ու հավատը սուրբ,
Մատյանն ես մեր՝ ծաղկաթերթ ու նուրբ,
Մեր բառի շիկնանքն ու հոտն ես բառի,
Մեր սրտի կրակ՝ հանգն ես մեր երգի:
Միտքն ես դու մեր խենթ ու բազմաստեղ,
Դու մեզ տարեկից, մեզ պես խելահեղ,
Մեր բազմադարյան, տանջված, քրքրված,
Խոսող ու քայլող, խաչված ու ծաղկած:
Դու մեր կարոտն ես, ճախրանք ու միտում,
Դարերի դպիր, մեր հայրական տուն,
Դու մեր բարձրություն, մեր իմաստություն,
Մեր զգաստություն, մեր իմացություն,
Դու մեզ ուղեկից ծննդյան պահից,
Սուրբ մասունք՝ կառչած հոգու քիվերից,
Դու մեր աչքի լույս, մեր կանչ ու մեր ճիչ,
Դու մեր տնակյաց, դու մեր ամեն ինչ,
Հին ու նորոգ, ու թանձրատերև,
Իմ հայոց լեզու ծիածանաթև...

***

Դու՝ իմ սեր,
Դու իմ հոգում նստել,
Իմ աչքերին թառել,
Իմ բիբերում ի՞նչ ես տեսել,
Ես քեզանից գերվել,
Ես քեզանից պարտվել,
Համակվել եմ քեզնից, տրվել:
Ինձ քո ազդու աչքը,
Ինձ քո այդ հայացքը
Գրավում է, տանջում ու կործանում,
Քեզ իմ սիրո դողը
Քեզ իմ պարանոցը,
Քեզ իմ սիրո բոցը,
Իմ սեր...
Դու ինձ փրկության ձեռք,
Դու իմ սիրո սիրերգ,
Դու ինձ ընկեր, հավատարիմ, ծանոթ,
Դու իմ երազ, կարոտ,
Դու իմ սիրո որոտ,
Դու իմ ճախրանք, տենչանք, տանջանք:

Ս...ին

Դու իմն ես, իմ բախտն ես, բախտիս նվերը,
Դու իմ փնտրածն ես, ուշացած սերը,
Բոլոր սերերիս գլուխգործոցը,
Իմ սիրո ուժն ես ու իմ հավատը:

Ս...ին

Ես չեմ վախենում՝ խոստովանում եմ,
Ես ամեն անգամ հպարտանում եմ,
Գուցե և իզուր, բայց և երդվում եմ,
Ուշացած իմ սեր՝ ես քեզ սիրում եմ:

Ս...ին

Երկար փնտրած, փնտրած-գտած իմ սեր, իմ սեր,
Երազներիս դու նյութ, գրածներիս դու տեր,
Իմ խենթ սիրո համար հանգստություն,
Դու իմ գտած միակ հարստություն:

Մայրերը գալիս են հավերժից ու գնում են դեպի հավերժություն

Ամալյա ԻՍԱՅԱՆ

***

Խոնարհվում եմ ես բոլոր
Մայրերի առաջ աշխարհի,
Ինչ հավատքի էլ լինեն
Անսահման շատ են բարի:

Իրենց սրտով մայրական,
Այնքան քնքուշ, սիրառատ,
Ես էլ կուզեի լինել մայր,
Ձեր նման ջերմ, անարատ…

Մայրիկիս

Քաղցր է մայրիկ
Համբույրը քո ջերմ
Եվ շատ ցանկալի,
Սիրտս լցված է
Թախիծով անուշ…
Քո համբույրների:
Հաճախ համբուրիր,
Որ շրթունքներդ
Շշուկով մեղմիկ
Անվերջ շշնջան,
Որ սիրում ես ինձ,
Որ տարօրինակ
Չթվա ոչինչ, որ
Չապրեմ թախիծ...

***

Մայր իմ թանկագին,
Հիմա ես կրկին,
Լուռ արտասվում եմ
Քեզանից թաքուն,
Քո չապրած բոլոր
Գարուններն եմ ես
Տխրաձայն հիշում:
Եվ քո անցյալն է
Հառնում իմ առաջ,
Երբ լալիս էիր
Դեռ չթառամած
Վառ ծաղիկներիդ
Հողմահար եղած
Եվ արմատախիլ
Հոգու հանգստյան
Եվ սիրո համար:
Այժմ հոգիդ է
Լալիս մեկուսի:
Մայր իմ սիրելի,
Դու հիմա, գոնե
Ցածրաձայն խոսիր,
Ես լուռ կլսեմ,
Չեմ ասի ոչինչ,
Կարոտել եմ ես
Աչքերին քո ջինջ:

***

Հաճախ ինձ երազ արի
Մայր իմ, հաճախ եմ քեզ
Տեսնում երազում,
Գրկում ես ինձ, համբուրում,
Սիրով ինձ գուրգուրում:
Կարող ես ինձ նախատել,
Եվ նույնիսկ պատժել,
Խնդրում եմ, չեմ ուզում,
Որ… երկար լռես:
Քանի՜ գարուն է անցել,
Ինչ մեզ հետ չես, մայր իմ,
Շատ եմ քեզ կարոտել,
Տխուր եմ, տրտում:
Կարոտել եմ քո ձայնին,
Աչքերին քո խոսող,
Փնտրում եմ ամենուրեք,
Արցունքով հոսող:
Սպասում եմ ամե՛ն օր,
Ավաղ, չեմ գտնում…
Հուշերում իմ խորհրդավոր՝
Հոգիս է մթնում:
Մայր իմ բարի, հաճախ ինձ
Այցելիր դու երազում,
Չտոչորվեմ, որ կարոտից,
Որ չմաշվեմ սիրազուրկ...

Երազ

Այս գիշեր նորից
Եկել ես այցի,
Թախիծ է տիրում
Իմ հոգում, մայր իմ,
Ինչ–որ խոսքեր էիր
Դու ինձ շշնջում,
Եվ հոգիս ցավից
Ննջում էր, ննջում…
Չհասկացա ես
Թե ի՞նչ էիր ուզում,
Ի՞նչ էր քեզ այդպես
Ցավագին հուզում.
Միայն լսեցի, ասացիր՝
– Դստրիկ իմ լուսե
Ինչպե՛ս եք ապրում
Ինձանից հեռու,
Երբ սուտ ու ճղճիմ
Բարքեր են հիմա
Համայն աշխարհում:
Մայր իմ, քո հուշով
Դեռ ապրում ենք մենք,
Փայփայում ենք քեզ
Մեր հոգում հավետ:
Եվ երբեք, երբեք
Քեզ չենք մոռանա,
Միայն թե չարը
Պիտի հեռանա,
Որ միշտ լույս տիրի
Աշխարհում այս մութ,
Որ մարդիկ լինեն
Բարի, ոչ անգութ:
Կհիշենք քեզ, մայր,
Քանի դեռ մենք կանք:

Անիիս

Գարնան զարթոնք ես,
Դու ծաղկանց բույր,
Մեղմիկ հովիկ ես,
Ու կարոտի քույր,
Զրնգուն ծիծաղ ես
Դստրիկ իմ անգին:
Կենսախինդ երգ ես
– Դու աշնան բերք ես,
Գալիքի ձեռք ես
Դստրիկ իմ անգին:
Իմ հոգու լույսն ես,
Իմ վաղվա հույսն ես,
Իմ ներս ու դուրսն ես
Դստրիկ իմ անգին:

***

Լիլիթիս ժպիտն՝
Արևածագ է
Այնպես քնքուշ է,
Ջերմ, մեղրանուշ է,
Մանկան սիրո պես
Անկեղծ ու թանկ է:
Եվ հմայում է
Բուրող ծաղկի պես,
Մեղեդի է մեղմ,
Սառույցներ հալչող
Արև է հրկեզ,
Սրտեր գերող է,
Ու կյանք արարող:
Ես անկարող եմ
Չցնծալ սրտանց,
Որ աշխարհում այն՝
Մեկն է, միակն է...

Կարոտ

Մի լուռ թախիծ է
Հոգիս գերում,
Կարոտով եմ քեզ
Մտաբերում,
Ու տանջում է ինձ
Կարոտը քո,
Տխրում եմ, աշնան
Ցուրտ եմ զգում,
Թեև արև է ներսում–դրսում...

Իմ երազներում

Իմ երազներում ես երջանիկ եմ,
Ուրախ ու անհոգ, և հմայիչ եմ,
Մանկան պես, նաև թռչնի վեր ճախրող,
Ապրում եմ զվարթ՝ իմ երազանքով:
Հոգով միշտ մաքուր, կամքով միշտ արի,
Ամենակարող՝ իմ երազներում,
Երկինքը պայծառ, ջինջ ու անթերի,
Ճանապարհս հարթ, աստղերը՝ մոտ:
Ուրեմն դարձյալ մորս գրկում եմ,
Իմ հայրենիքում՝ հեքիաթում այն պերճ,
Իմ երազներում ապրում եմ ես մերկ
Ամենքից հեռու, բայց ջինջ հոգու մեջ...

15Ә

Հայկական առակն ուսուցանում է.

Մի արծաթասեր ու ագահ մարդ ասում է.
– է, Աստված, ինչ բան որ ձեռքս ընկնի, ոսկի և արծաթ դառնա:
Եվ Աստված կատարեց նրա խնդիրքը: Ինչ որ ձեռքն էր ընկնում, անմիջապես ոսկի և արծաթ էր դառնում՝ թե հաց, թե ջուր, և թե այլ բան: Ժամանակ անց նա սովից մահացավ:

Վարդան Այգեկցի

Հայկական ասույթն ասում է.

Հաստ պարանն ավելի հեշտ կանցնի ասեղի ծակով, քան ագահ մեծատունը արքայություն կմտնի:

Փավստոս Բուզանդ

Ագահ մարդը գայլ է, հոշոտող և ծարավի մարդկանց արյան…

Մկրտիչ Նաղաշ

Կազմեց՝ Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

«Շատ կենսուրախ մարդիկ են համզաչիմանցիները:
Ապրում են լեռներում, ցանքը կարկուտն է տանում, կամ սեպտեմբերին ձյուն է գալիս, բերքը դաշտում ծածկում, բայց էլի չեն ընկճվում, էլի կատակներ են անում...»

Վախթանգ ԱՆԱՆՅԱՆ

Համզաչիմանյան խնդուկներ

Ամուսինը տուն է գալիս, հետը միս է բերում:
Կինը հարցնում է, թե որտեղի՞ց:
– Սիրեկանիցդ, – զայրացած պատասխանում է ամուսինը:
– Խի՞, Օնոն կովը մորթել ա՞:

***

Սանդրուկը ճանաչված անասնապահ էր, Սուլվարդը անվանի կթվորուհի: Մի անգամ երկուսով Արխաշանի յայլաներից գյուղ էին իջնում: Սուլվարդի մեջ կիրքն էր արթնացել, և նա տարբեր ձևերով ցանկանում էր Սանդրուկին հասկացնել իր միտքը: Ոչինչ չէր ստացվում:
– Այ Սանդրուկ, դու ստաժավոր անասնապահ ես, կարաս ասես թե ցուլերը ոնց են հասկանում, որ կովերը ցանկանում են ծածկվել «բեղմնավորվել»:
–Խի չեմ կարալ ասեմ, նրանց հոտիցը, – պատասխանում է Սանդրուկը:
– Խի՞, էդ դու գրիպ ե՞ս, – վրա է բերում Սուլվարդը:

***

Մի անծանոթ ավտոմեքենա անցնում է գյուղով: Մի ծերունու մոտ կանգնելով, վարորդը ցանկանալով ծաղրել, հարցնում է.
– Պապի, էս գյուղի անունը ի՞նչ է, – ակնարկելով գյուղի հին անունը՝ Բոզիգյուղը:
Ծերունին մի պահ վարորդին է նայում, մի պահ նրա կողքին նստած սիրունատես ու թեթև հագնված աղջկան, պատասխանում է.
– Բալա ջան, կողքինիդ անըմիցն ա:

***

Ավտոմեքենայով գյուղ են մտնում երիտասարդ զույգեր: Հանդիպելով գյուղամիջում կանգնած Դադիկոյին, աղջիկը հարցնում է.
– Հայրիկ, սա Բոզիգյու՞ղն ա:
– Հա բալա ջան, քեզ պինդ պահի, – հետևում է պատասխանը:

***

Մի կին գնում է Երևան, մեկի տանը աղախին է աշխատում, տանտերերի ննջասենյակը հավաքելիս անկողնում մի պահպանակ է գտնում, վերցնում է, զարմացած նայում՝ ոչ տեսել ա, ոչ լսել: Տանտիրուհին երևակայելով հարցնում է.
– Ի՞նչ է ձեր գյուղում սեքսով չե՞ն զբաղվում:
– Զբաղվըմ են, համա սենց կլպահան չեն անըմ:

***

Բժշկի մոտ են բերում մի ծանր հիվանդի, որին Երևանում անմխիթարական ախտորոշում էին տվել: Բժիշկը զննում է և ասում.
– Ցեխի լոգանք եմ նշանակում, ցեխեր պիտի ընդունի:
Բժշկի մոտից դուրս գալուց հետո, հիվանդի որդին դիմում է բժշկին.
– Բժիշկ ջան, ախր Երևանում վատ բան ասին, հըմի դու ցեխեր ես նշանակում, ո՞նց հըսկանամ:
– Ոչինչ, թող կամաց հողին սովորի, – պատասխանում է բժիշկը:

***

Երկու հարևանուհի զրուցում են.
– Ախչի, էս քանի վախտ ա մի բժիշկ ա գնըմ-գալի ձեր տուն, հո հիվանդ չունե՞ք տանը:
– Այ բանը, անցած տարի, որ ձեր տուն վայեննի էր գընըմ-գալի, պատերա՞զմ էր:

Роберт БАБЛОЯН

О, ЖЕНЩИНА! ИЛИ МОНОЛОГ МУЖЧИНЫ

Моей жене - Татьяне Коротковой.

О Женщине много сказано.
О ней и поныне говорят: и в праздники, и в будни.
Она и сама о себе говорит:
иногда с трибуны,
больше трудом,
но чаще – молча,
тем таинственным языком,
что у нас, у мужчин,
принято называть обаянием.
ОБАЯНИЕ!
Не под его ли магическим влиянием
зрело мировое искусство?
Не под его ли волшебным колдовством «рождались»
шедевры Шекспира и мадонны Микеланджело,
музыка Моцарта и поэмы Пушкина?
О, ЖЕНЩИНА, - колыбель рода людского!
- Святыня - когда ты МАМА,
надежный друг, когда СЕСТРА,
когда ты – ДОЧЬ,
до вздоха последнего верна.
И мама, и сестра, и дочь,
когда - ЖЕНА.
Ты - Медея и Клеопатра,
Сапфо и Жанна д Арк,
и, как Екатерина, велика
во все века…
Раздвинув земные оковы,
ты и Терешковой успела стать.
О, ЖЕНЩИНА,
сердце твое – любви кладезь,
душа – потемки.
Долог и сладок – путь к тебе, в Эдем.
Но грустна вдвойне - обратная дорога.
О, ЖЕНЩИНА, - ты Муза и «Могила» воспевших тебя!
Но нужна, всегда желанна,
и не важно – СКОЛЬКО нам сейчас…

О, ЖЕНЩИНА, – женьшень ты для нас!

08.03.2012 г.

Գիտե՞ք, ո՞ր

Որոշ մասնագետների պնդմամբ, Անատոլիա բառը թարգմանաբար նշանակում է **խաղողի հայրենիք**, այլ ոչ թե հունարեն արևելք...

***

1929 թ.-ին Չանկուշ գյուղից (արևմտյան Անատոլիա) ԱՄՆ գաղթած Կոլոմբոսյանները Անդովերի (Մասսաչուսեթս) իրենց կաթնարտադրությունում սկսեցին **յոգուրտ (մածուն)** պատրաստել: Առաջին հաճախորդները ոչ միայն հայեր էին, այլև հույներ, եվրեներ, իտալացիներ: 50-60–ականներին, երբ յոգուրտը ճանաչում ստացավ Ամերիկայում, Կոլոմբոսյանները ճանաչվեցին յոգուրտի (մածունի) ազգային էքսպերտներ: Կոլոմբոսյանների թոռնուհու վկայությամբ, նրանց տատիկը՝ Ռոզա Կոլոմբոսյանը առաջիններից մեկն էր, ով սեփական ֆերմայում ստացված կաթից պատրաստել է բազմազան կաթնամթերքներ:


***

Հայկական որոշ կերակրատեսակների պատրաստումը կապված է եղել զանազան ծիսակատարությունների հետ: **Հերիսան** նվիրված էր հատիկամշակությանը, **կաթնապուրը՝** կաթնամթերքի առատության պահպանմանը, **խաշը՝** անասնապահության հաջողությանը:

***

ԱՄՆ-ի դրամական միավորի՝ դոլարի կանաչ և սև ներկերի ստեղծողը Խարբերդցի, 1825 թ. ծնված Խաչատուր (Քրիստափոր) Սերոբյանն է: Ուշագրավ է, որ այդ գյուտը նա արել է 22 տարեկան հասակում:

ЮМОР- ДУХОВНАЯ ПИЩА



Вы видели, чтобы животное смеялось? Смех – это свойство ума, развитого, блестящего. Добрый человек никогда суровую правду не скажет. Единственная форма, в которой такая правда не убийственна, а приемлема - это юмор. В нашей стране именно юмор формировал мировоззрение.

Баночка с рыбой

Иностранец ни секунды не выдержал бы в бывшем Советском Союзе, потому что он не обладал нашим юмором. Например, где, кроме как в СССР, можно было увидеть, что стоит очередь, а товара нет. Что бы ни вынесли на продажу, покупатель купит не глядя, потому что покупает он его чуть ли не раз в жизни, поэтому в квартире советского обывателя можно было найти все, чего не было в магазинах. Не дом, а поистине склад или кладезь редчайших экспонатов.

Помню, в московском магазине «ОКЕАН» единственным товаром красовалась маленькая консервная баночка с рыбой. В огромном магазине - всего один продукт, и то законсервированный, и банки эти были выстроены в пирамиду. Вспоминая сегодня эту картину, раскрываешь тайну нашего выживания – вид маленькой консервной баночки в огромном магазине под названием «Океан» был до того смешон, что можно было жить. Наша жизнь определялась формулой «не хлебом единым». Из всех видов пищи мы предпочитали духовную, т.е. соленый огурчик, селедочку, вареный картофель и водочку – советский рай! В этом раю собирались сотрудники учреждений и перекидывались анекдотами, например, о медалях Брежнева.

Самым распространенным киножанром была сатирическая комедия. Наша жизнь давала богатую пищу пародистам. Если главным инструментом зарубежного комика служила пластика, то у советского комика это было слово. Но по мере того как магазины стали наполняться товаром, впрочем, далеко не для всех, юмор стал ослабевать. «В СССР мы были в оппозиции коммунистической идеологии. Когда все стало можно, обнаружилось, что нечего сказать», - поделился своей обидой на нынешние времена Г. Хазанов, будучи в гостях на фестивале «Аммоно».

Не обижайтесь!

Нет человека, который не изведал бы вкуса обиды. Ты обижаешь, тебя огорчают. У каждого своя правда, и эти правды враждуют меж собой.

Когда обиженный Моцарт писал очередную оперу, симфонию, сонату – это был юмор, мировоззрение. Есть композиторы, которые пишут о своей обиде – Бетховен, например, - обиженная душа. Красиво? Бесспорно, но мы находим Бетховена в его музыке, между тем как Моцарт скрыт от посторонних глаз в своих творениях, и Бах – тоже.

Смех вчера и сегодня

Хорошей нельзя было назвать нашу жизнь, но, как говорит Евгений Петросян, мы не можем жить хорошо, мы можем жить только весело. Человек был лишен элементарных прав, всюду он натыкался на «не положено». Даже предметы первой необходимости в стране были дефицитом, но зато у нас был Райкин.

Чем отличался советский юмор от сегодняшнего? Советский был сатирический, разящий и глубокомысленный, а сегодня можно смеяться только над невыдуманным недомыслием.

Вспомним у Райкина, например, тему о детях:

«Как нам бороться с нашим светлым будущим?..»

«Зачем тебе эти сюрпризы природы?..»

«Лично у меня детей нет – мне кажется...»

«Любое воспитание – это насилие. Человек должон (у Райкина именно «должон», а не «должен») расти на свободе, как цветок...»

А теперь сравним с невыдуманным юмором, почерпнутым из нашего телеэфира:

- Расскажите, пожалуйста, о своем сыне.

- Мой сын с детства любил подражать животным. Однажды на школьном сборище он притворился верблюдом и плюнул одному мальчику в лицо.

А вот из интервью по поводу одной постановки:

- Что вы скажете о своей роли?

- Каждая актриса мечтает сыграть роль падшей женщины.

Как вы стали режиссером?

- От нечего делать.

Почти на ту же тему:

Электрик заходит в мастерскую художника. При виде картин, развешанных на стенах, он спрашивает:

- Кто все это сделал?

- Я.

- Чего только люди не делают от нечего делать!

А вот вам еще невыдуманный юмор:

В Ширакском марзе отслужили обедню с литургией.

Из впечатлений местных жителей: «Спасибо за очень интересное мероприятие».

Идут дни великого поста. Школа. Дети отмечают день рождения одноклассника. Одна из родительниц отказывается от печеного:

- Я соблюдаю пост до пасхи.

- Вы из свидетелей Иеговы?

- Наоборот, я последователь Апостольской церкви.

- А это что такое, новая секта? Расскажите, расскажите нам о вашем личном веровании, боже, как интересно!..

Дорожный патруль останавливает машину. Он понятия не имеет, кто в ней сидит. Водитель никак не может убедить автоинспектора, что в машине находится Католикос Всех Армян Вазген I. Спор настолько затягивается, что Святейший в конце концов сам выглядывает из окна машины. Увидев Католикоса на таком близком расстоянии, ошарашенный милиционер вытягивается в струнку:

- Простите, товарищ Бог, простите, товарищ Бог...

Если будем внимательно прислушиваться, то нет ничего смешнее и невероятнее, чем юмор, почерпнутый из самой жизни. Вот еще напоследок.

Французской актрисе на канале «Культура» задают вопрос:

- Кто ваш любимый режиссер?

- Грузин Параджанов.

- Но Параджанов - армянин.

- Все равно - русский.

- Когда смотрю телевизор, мне становится стыдно, - жалуется один пожилой человек, - как поют, как танцуют. Поневоле переключаю на русский канал. Там тоже не бог весть что, но мне не так стыдно, потому что это уже не армяне.

В картинной галерее Армении. 80-е годы. Туристы из России входят в зал Айвазовского, расположенный в отделе армянской живописи:


- А Айвазовский у вас армянин?


Цовинар СИМОНЯН-ЛОКМАГЕЗЯН.

Армянские традиции, связанные с рождением ребенка, в рисунках Альберта Габриеляна



Одно из главных в семейных традиционных обрядах армян – это обычаи и церемонии, связанные с родами, рождением ребенка и после рождения ребенка (карасунк).





В первом гранате изображен момент, когда беременная женщина прыгает через беременное животное. Им могло быть любое домашнее животное: кошка, собака, корова, овца и т.п. Считалось, что в этом случае болезнь, которая называлась тхпотутюн (венерические заболевания) переносятся животному, и ребенок родится здоровым. Болезнь была названа по имени монстра Тхпи. В средневековых рукописях Тхпи изображался в виде Минотавра изображен слева от граната.

Над гранатом изображен змей, во рту которого находится лягушка. Это еще один из способов лечения больной.

Изо рта змеи брали лягушку и делали из нее талисман, который носила больная женщина. Армяне считали, что болезнь на беременную могли наслать злые женщины, которые с помощью тхпаулунка (синие камни, которые падают во время града) насылали порчу.

